Revue Arménienne
des R. R. P. P. Méchitharistes
à Vienne



ՄԱՄՈՒԼ

ԿՓԱՆԱԳՈՒԱՑ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

29ՐԴ ՏԱՐԻ

1899

ԹԻՒ 15 ՕԳՈՍՏՈՍ 1

ԽՄԲԱԳԻՐ - ՏՆՕՐԻՆ
Մ. ՄԱՄՄՈՒԹԵԱՆ

ԻԶՄԻՐ
ՏՊԱԳՐ. ՄԱՄՄՈՒԹԵԱՆ

EN 7/2
62
STELT
8.99
A 6

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՈԳԻ 601
ԼՈՒԻԶ ԻՆՉՈՒ ՉԱՄՈՒՍՆԱՆԱՐ (Պ. Եւոճդ) 604
ԴՊՐԵՒԱՆԲԻ Մ ՊԵՏՔՆ Ի ՎԱՆ (Թիթեռնիկ) . . . 611
«ԻՆՉ ՇՈՒՏ» (Կ. Յ. Պէշկէօբիւր) 617
ՆՈՐԸՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՇՈՒՐՋԸ (Բ. Զօրեան) . . 618
ՋՐԱՐՈՒԺՈՒԹԻՒՆ-ՋՐԱՐՈՒԺԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՔ
ԻՋՄԻՐԻ ՄԷՋ (Մ. Նազարեան) 621
ՀՈՎԻՒԸ (Ռ. Որբերեան) 626
ԳԻՐ ԵՒ ԼԵԶՈՒԻ ԾԱՂՈՒՄԸ (Բաղդասաթ Տրճս. գիտուբեճեի) 628
Պ. ՖԱՍՈՒԼԱՃԵԱՆ (Յ. Կ. Զամչեան) 631
ԾՆՆԴԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՔ (Տօքթ. Կ. Յ. Բալաեան) 633
ՕՐՄԱՆԵԱՆ Ս. ՊԱՏՐԻԱՐՔ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ
(Ստեփան Մակարեան) 636
ՐՆԱԲԱՆԱԿԱՆ (Բազմավէպ) 638
ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԼԻՒՆ 640
ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ 640
ՎԵՆԵՏԻԿԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՔ
(Լ. Պալեօղեան — Յ—ե—թ Ա. Մ—ճ) . . . 641

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ Ա. ՄԱՄԼՈՑ

ԴԱՒԻԶ . — Տ. Կ. Յ. Բ. Ժամանակիդ ստացանք ձեր առաջին գիրն ինչպես նաեւ վերջինն։

ԵՐՋՆԿՍ . — Տ. Տ. Պ. Ժամանակիդ ստացած ենք 5 Յունիս ձեր բուակիրն. գոցուած է ձեր հաշիւը։

ՄԱՐԶՈՒԱՆ . — Ա. Յ. Կ. Ստացանք ձեր վերջին գիրն։

ԻՊՐԱՀԻՄԻՍ . — Ս. Թ. Ստացանք ձեր գիրն. բերերն նոր հասցէին կ'ղրկուին ներկայ բուկս։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՄԼԷԴ

Թարգ· Գ· Յ· ԲԱՐՈՆԵԱՆ

Վ.ԼՆՆԱ Մխիթարեան Տպարան **1899**

Շէֆ-բէյէ պապկէրով

Գին 10 դրչ·

ԾՆՆԴԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՔ

ԿԱԶՄԱԽՕՍՈՒԹԵԱՆ, ԲՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ

եւ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Ի ՊԻՏՍ ՁԱՓԱՀԱՍԻՑ

ԳՐԵՑ

ՏՕՔԹ· Ն· ՏԱՂԱԻԱՐԵԱՆ

Կ· Պոլիս Տպագր· Մատբեասեան **1899**

Գին 6 դրուշ

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ե· Տ Ե Ր Ձ Ե Ա Ն

Տպագր· Ն Կ·ԵՊՊԱՐԵԱՆ 1898 Կ· ՊՈԼԻՍ

Գին 27 դրուշ

ՀԻՄՆԱԿԱՆ ՆՈՐ ԵՂԱՆԱԿ ՓՈՒՆՆ· ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

Բ· Տ·Է

Բարձրագոյն դասընթաց տարրր· Նախակրթարաններու·

Բ· Տպէքռ·ԲԻՒՆ

Ցօրեմնց Յ ·Թ· ՀԻՆԴԼԵԱՆ

Կ· Պոլիս տպագր· Յ· Մատթէոսեան 1899

Գին 6 դրուշ

174 ՐՐ
ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ՈՍԻՄԵԼԻԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՈՅ

Ա. Ռ Ա Ջ Ի Ն Շ Ա Հ Ո Ղ. Թ Ի Ւ
300000 Ֆրանք

Աբեղեան Բուժէլիի երկաթուղայայ 173 րր. վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Յունվար 20 — փետրուար 1 ին, Աբբատնի վոդևրանոցի մէջ։

Սոյն վիճակահանութեան Օսմանեան դրամատան բոնօժէանները կ՚վաճառուին իզմիր, Բասմաժ Չօնիշէռ, թիւ 12 Տիար Օ. Սլատարսի դրասենեակը միայն։

Գին մի ամբողջ բոնօժեսի 3 ½ դահեկան ոսկի։

Շահող բոնօժէաներն ներկայացնողն, պիտի ստանայ մայր ոսման, որով պիտի կարենայ շահած գումարն գանձել Օսմանեան դրամատունէն։ 19—24

Յ. ԳԱՐԱԳԱՇԱՆ և Վ. ԶՄԻՒՌՆԱԿԵՍԱՆ

ՃԱՄԱՓՈՐԹՔ

Պատիւ ունինք ծանուցանել Աշխ. Հասարակութեան թէ ի Զուհա Պէտմէէն թիւ 14 մեր նոր բացած վաճառատան մէջ կը ծախուին մեծ և փոքր քանակութեամբ ամեն տեսակ ժամացոյցներ. ոսկիէ, արծաթէ, նիքէլ, և oxidé, զարնոզ ամսաթուոյց և քրոնօմէթրը դրպանի ժամացոյցներ։

Զարթուցիչ, պատի և դպրոցի մեծ ժամացոյցներ (pendules։)

Զանազան տեսակ դոհարեղէնք, ինչպէս ալմաստնջան, քարփիցա եւն։

Ժամագործներու և ոսկերչաց վերաբերեալ ամեն տեսակ զանազան գործիներ։

Հոս կը յարդարուին ամեն տեսակ ժամացոյցներ լրատես երաշխաւորեալ։

Ժամացոյցներու վաճառումն և յարդարումն արտակարգ զգուշութեամբ կ՚ընեան։ 11—24

ԴԵՐԶԱԿԱՏՈՒՆ

ԳԷՈՐԳ Մ. ՔԷՉԻՃԵԱՆ

Ապահովագրական Ընդհանուր Գործակալ, Թիւ 1

Վաճառատունս հատատուած օրէնքի վեր սուզ ժամանակի մէջ ունեցած բազմաթիւ յաձախորդներս, ապացոյց սի են թէ. մենք մեր յայտարարութեան հաւատարիմ գտնուած ենք, հարկ չկայ գովեստներ շռայլել. յայտմ, մեր գործերը վկայ են որպէն՝ թէ դներուս ժամանութեան հետ նաև ունինք մեծ առաւելութիւն մը ուրիչ նմանօրինակ հաստատութիւններէ ձեւի, կարի և ապրանքի մասին։ Երևակայեցէք թէ որչափ դժուարին է ամեն մէկ անհատի ճաշակը գոհացնել և ձևին յարմարութիւն տալ, նա մանաւանդ երբ այդ անձը առարկին անգամ է որ հագուստ չինել կուտայ մեզ։ Ուստի ինչպէս մինչև այսօր, նոյնպէս ալ այսուհետև պիտի աշխատինք ամեն չանք և զոհողութիւն չի խնայել նոյն իսկ ամենէ բծախնդիրները անգամ գոհացընելու։

Աւելորդ չենք համարիր նաև իմացընել թէ վաճառատանս մէջ կը գտնուի քաղցիրներու, ֆիսօնեներու և այլ տեսակ առաջեղէններու ճոխ հաւաքածոյ մի, և թէ պատրաստ կարուած հագուստներ ալ ունինք։

Ձմեռ, ձեռատոր եւ տոկուն, դիմեցէք եւ տեսէք։ 21—24

ՄԵԾ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հայոց Դէպ Ըռաշ

Դ. եւ Լ. ԹԷՐԻՏՃԵԱՆ

Պատիւ ունինք ծանուցանել Արգոյ Հասարակութեան և մանաւանդ բոլոր մեր պատ. Յաձախորդներուն թէ վերջերս մեր վաճառատունը խոստ ձախացուցած ենք գանազան ու նաստիկով։

Մեզ դիմողը ամեն ինչ պիտի գտնէ շատ ժամանակին։

Ունինք նաև Ալբիսարի և ուրիշներու ընտիր օճառներ, նոյն գործատուներուն ծախուած գլուխով վրայ ԱՈՒԱՆՑ ամենատիպար յատկապրանքներուն մէ՛նելու։

Գիւրութեան համար մեր յաձախորդներուն հաշուետետրիկ կը յանձնենք և մեր սովորութեան համեմատ հաշիւնիկը ամիսը անգամ մը կը փակենք։

ԱՆՀԱՄԵՄԱՏ ԱԺԱՆՈՒԹԻՒՆ 15—24

ԵՋԱԿԱՆ ԱՌԻԹ

Թէ՛ մեծ հմտութեան և թէ՛ բարի վարք ու բարքին համար ամենաբոլոր կարգի վկայագիրներ ունեցող ազգային մը պատրաստ է վճռաւատանց ամէն թուրքերէն, հայերէն, գաղղիերէն և ղերմաներէն լեզուաց՝ դրագրութեան և տոմարակալութեան պաշտօն վարել։ Քաղաքս նոր եկած ըլլալուն համար չատ չատ վաւեր ամսաթուակաւ չատանալու մեծ զոհողութիւնը պիտի ընէ։ Փորձեցէք մէկ քանի ամիս և եթէ ձեր խրճիթը չի վկայէ ձեզ թէ «մէկ լեզուի գիտնն անգամ պակաս գնով չորս լեզուի գրագիր ունեցած չէի, այսչափ հմտուտ և հաւատարիմ ըլլալով հանդերձ»... եթէ իրականացած չի համարիք այս ճշմարտութիւնը, նա պիտի մեկնի ձեր քովէն իր ամսաթուակը տուժելով։

Աւասիկ անմրցելի երաշխիք, անհուն ինքնավստահութեան արդիւնք, աւասիկ լաւի տեղ լաւագոյն գրագիր կամ դաստատուն ունենալ ուզողներուն սիրտը և քսակը գոհացնելու եզական առիթ։ Ապահովագրուած առաւելութիւն և միանգամայն ախտաորութիւն։

Ինք պատրաստ է նաև տուներու և դպրոցներու մէջ յիշեալ չորս լեզուներէն զատ բարձր մաթէմաթիքի, բնական գիտութեանց և կրկնատոմարի դասեր տալ և ղերմանական դերապանց մէջտեղով մը բժշկութեան կամ դեղագործութեան տակի 2–3 տարիներու պիտանի ուսմունքը աւանդել։ Դիւրամատչելի պայմաններ և յատկապիտութիւնը ապահովելու դրամական երաշխիք։ Դիմել ի Մամուրեան տպարան։

Խ. Պ.

3 – 4

ՀԱՅՔ Ի ՋՄԻՒՌՆԻԱ ԵՒ Ի ՇՐՋԱԿԱՅՔ

2 ՀԱՏՈՐ

Գրեց Հ. ՕՍՊՈՐ Վ. ՓՕՍԵԱՆ

68 Պոռնէրով

Վիէննա Մխիթ. Տպարան 1899

Գինն 2 հատորին 30 պրուշ

ԹԻՒ 15 1 ՕԳՈՍՏՈՍ 1899

ԲՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՈԳԻ

Ա.

Ազատասիրեալ տեսութիւնն ապատարամիտն ամ՝ղղացած են մարդիկ երբ տեսած են որ իրարու հանդէպ ամենման կենդանիներէ են։ Ամենէն չէ թէ զէմքով, — զի զէմքի գծեր, երես, քիթ, բերան, ճակատ չեն զանազաներ մարդիկն իրարմէ, ինչպէս նաեւ անբանները, քանի որ տեսնն եւ ունեցուն տեղ ամեն գործարանները ունին, — այլ անենէն՝ բնոյթի ու խելքի, կորովի ու նախաձեռնի կողմէ։ Ամենամտածեալ տյղ դիւրաւ կրնան եկած է անշուշտ երբ մարդիկ իրարու հետ սկսած են չփոխել ու չտիրել կենդանի զանազան պարագաներու մէջ, որպէս զի երբ վայելեն, որպ իրարու ճանկէն կորչին, եւ՝ երբ լսպաքցուկնելի, հարկ համար զիրար հաշտեն։ Այս սեռակ պայքարնե-

բու մէջ յաղթութիւնը միշտ չէ թէ մեծ բթի, լայն բնթանի, ադուր աչքի, այլ կորովի բազկի, տոկուն գլխի կողմն կ'ծռայ։ Կարողութեան այդ զանազանութենէ, արդիւնք տեղային ազդեցութեանց և մարզական ու կրթական վարժութեանց, յառաջ եկած է անհաւասարութիւն, հետևապէս և հակասութեանց և տարբերութեանց դիտակցութիւն։ Եւ խնացական ու բարոյական մարդը ներգործելով նաև ֆիզիքական մարդուն վրայ, դիմական նկարագրի զանազանութիւնն ևս ղղալապէս շեշտուած է վայրաբնակ ու քաղաքակիրթ մահկանացուներու մէջ։ Այսպէս հետզհետէ մարդիկ հեռացած են իրենց բնիկ վիճակէն՝ և հեռանալով՝ ըստ տեղւոյն, ըստ դաստիարակութեան և կենցաղավարութեան, նորանոր բնածին ու օտարամուտ հանգամանաց տիրացած, և այս հանգամանաց բնտիր կամ յոռի ներգործութենանց բերմամբ լաւ կամ վատ գործերու հեղինակ հանդիսացած են։ Բայց լաւին ու վատին փոխաբարը չէր կրնար միօրինակ լինել ամեն ժողովրդային խումբերու մէջ, որ այլազան տպաւորութենանց ներքև ածելով, հարկաւ այլազան ըմբռնումներ և դաղափարներ դաւանած են բնութենան և կենաց այլ և այլ երևոյթներու վրայ։ Այսի ծագած է հետաքրքրութենան ու պիտողութենան ոգին, ասոր ծնունդ առած է ինչպէս ընկերային նայնպէս անհատական տարբեր դրութենանց և կազմութենանց հետազօտութիւնն, որ հաստատակամ դիտական քննադատութենան դուռ բացած է...։

Այդ դատաքննութենան ոգին՝ որ իր սարդապոյն ձեռին մէջ լոկ կերպ մը բամբասանք է, կ'ծաղկի ուր որ ծերեր ու պատանիներ անցելոյն յիշատակներով և նախապաշարումներով տոգորուած՝ կ'դատեն ու կ'դատապարտեն ինչ որ անսովոր է, ինչ որ իրենց աչքին հրէշային կ'երևի, ինչ որ վերջապէս նորութիւն մ'է։ Այնպէս կ'ծուի այս զեհերկ դատաւորներու, որ իրենց դրացին մոլութենանց անօթ մ'է, և եթէ կրծելու ոսկր մը չը դանեն, կ'հնարեն, կ'կարկտեն տոտոպիներ, որպէս զի միտանն մինչև իսկ մերձաւորներ ու ազգականներ։ Ընկերային

այսպիսի տխուր վիճակի մը մէջ, ոչ նուազ կարեւորութիւն ունին վերաւորները, որ մեռնելիկն ու քննադատի պաշտօն կը վարեն ու խաշոր սուտեր միամիտ դեղջուկներու կրնալ տալու արհեստը քաջ գիտեն։

Վա՜յ այն ժողովուրդներուն որ այս տեսակ քննադատներէ կ'առաջնորդուին և օրէ օր ուղիղ ճամբէն, ճշմարտութեան ճամբէն շեղելով, ղէպ ի վայրենութիւն անդիտաբար կ'դիմեն։

Բ

Եւ քանի՜ երանելի էին արդեօք այն օրերն, երբ աղգային կենաց այլ և այլ երևոյթներ անտես, անլսելի կ'անցնէին մի և նոյն յոռի ուղղութեամբ. ի՞նչ սքանչելի համակերպութեամբ կ'ընդունէին արդեօք մեր պապերն ամեն հրապարակային արտայայտութիւն, ամեն պաշտօնական իրողութիւն, ամեն գրական արտադրութիւն, թէև այդ ամեն բերքեր տգիտութեան և նախապաշարմանց, և ստէպ նենգամտութեան արդիւնք լինէին։ Որո՞ւ մտքէ կ'անցնէր, ո՞վ կ'համարձակէր այս ինչ հանրային գործը կամ՝ այն ինչ պաշտօնէի արարքը ի քննին առնել և ճշմարտութիւնն երևան հանելու ջանալ։ Այսպիսի յանդգնութիւն մը ծանր պատժի կամ հանրութեան աբհամարհանքին արժանի կ'համարուէր։ Եւ ի՞նչ էր կանոնը, սովորութիւնը. — Ընդունիլ ամեն ինչ լռելեայն իբրև պատգամ, ինչ որ վերէն, իշխանութենէ մը կ'բխէր, գովել ու պաշտել, իբրև Աւետարանի խօսք, ինչ որ գրող կարգացող մը հրատարակէր, մի միայն այս պատճառաւ, որ գրուած է, և ինչ որ գրած է անքննելի, անբռնաբարելի հարկ էր որ մնար։ Այս էր կանոնն երբ տակաւին օրագրութեան հետ ճշմարիտ դատաքննութիւնն մանկութեան մէջ էր, և եթէ մերթ ընդ մերթ արդար ձայն մը, բողոք մը լսուէր հարցասէր բանգէտի մը կողմէ և Ըմլած հատարակութեան մէջ յուզում պատճառէր, իսկոյն պաշտօնական կամ անպաշտօն շանթեր կ'տեղային ըմբոստ դլխուն վրայ, և նախկին մտային ու հոդեկան անտարբերութեան և անդոր-

յուվենան հետ մի և նոյն զեղծմունք կ'շարունակուէին հասարակական միամտութենան ու տգիտութենան շնորհիւ։

Ինչպէս ամեն ժողովրդեան նոյնպէս Հայոց մէջ երբեմն, և մինչև իսկ մի քանի տասնեակ տարիներ առաջ, այս եղած է ճառադրական կացութիւնն, այսինքն հասարակութենանց շրջանէն դուրս արձակուած ո՛ և է քննադատական վրձիռ անընդունելի նկատել, ինչպէս նաև իբրև հերետութիւն կամ թշնամանք՝ ամեն դատաստան զոր կ'ժամէին արտասանել արբապլուծ քննադատներ կրօնական, տոհմային և այլ խնդիրներու և իրողութիւններու մասին, թէև արձակուած դատաստանը ճշմարտութենան վրայ հիմնուած լինէր։

Այսպէս եղած է օրէնքն հին խաւարին ժամանակին, օրէնք՝ որ այնքան զարեր մարդկութենան առաջադէմ քայլերուն դէմ բռռոններ դնելէ զատ, բազմաթիւ լուսամիտ գլուխներ կերած է, և դեռ ևս տեղ տեղ իր տիրապետութիւնը կ'շարունակէ խոր տգիտութենան և բարոյական թշուառութենան մէջ պահելով ծաղծղելու և զարդանալու ընդունակ հասարակութիւնները։

(Շարունակելի)

ՔՈՔՐՈՋ ԲՆՋՈՒՆ ՋԵՄՈՐԱՏՆԵՆԵՔ
(ՎԻՊԼԿ)

Ա.

Բարեկամական ճշմարիտ կապակցութենան մը մէջ էինք այն առեն՝ Տօքթօրին հետ։ Շատ անգամներ կը սիրէինք առանձնանալ և մեսին հաճոյալի ժամանցներ կ'ունենայինք շրջապատեալ՝ գալարուտ մարդերուն մէջ, օդասուն ու հովասուն բարձունքներու վրայ, կարկաչող առուներու եզերքը, կանանչազգեստ անտառներու խորն ու ազբիւրներու առջև։

Տօքթօրը, միջահասակ, ոսկրուտ ու ջղուտ մարդ մը, հապիւ 40 տարեկան՝ մեծ սիրով փարած գործին իր հիւանդները ճանչնալու համար արհեստին ամբողջ նրբութիւնները մէջ նեան-

լով՝ բոլոր գործութիւնը կը թափէր անոնց վրայ։ Գիւղին համակրելի Տօքթօրն էր անիկա։

Իւրա ու կոչա դիմագծերէն, որով իր մանկութիւնը, իր պատանեկութիւնը կը ճանաչար, այժմու բանաստեղծութեան գեղարուեստի չրջագիծը չիներ էր որ իր մեղմ ու համակերպիկ դէմքը կը պարուրէր, նման մացառի ու թուփի այն չորաբեկ ու վտիտ ճիւղերուն, որոնցմով չինուած չրջանակ մը երփներանգ ծաղկեպսակէ մը աւելի պճնագեղ կ՚ըլլայ չատ անգամ։

Այդ տարիքին մէջ դեռ ամուսնացած չէր Տօքթօրը, և ամուսնութեան խօսք ալ չէր ըներ։ Այն բոլոր կիներէն ու օրիորդներէն որոնց կրնար սիրտը չահիլ, և ոչ մէկին կապուած էր իր բարեկեցիկ վիճակովը թնաւ չէր մտաբերած ամուսնութիւնն, և ոչ այն վաղանցիկ հաճոյքի ժամերը, որոնց իր վիճակակիցները չէին կրնար հասնիլ, ողջմեալի մարդիկ՝ որոնք կապմ ու պատրաստ երանութիւններով կը բաւականանային։

Այս մարդը՝ սիրոյ հանդէպ կարծես այրած, մխիթր դարձած սիրտ մը կը կրէր, տարբեր այն ամեն մարդիկներէն որոնք սիրոյ համար նոյն իսկ պատրաստ են իրենց կեանքը զոհելու։ Չեռի կ՚ապրէր անիկա ընկերական ամեն համախմբութիւններէ, հանդէսներէ, զուարճութիւններէ և վերջապէս այն ամեն բաներէ որոնք մարդուն մտքին վրայ ուրախութեան ու հաճոյքի տպաւորութիւն մը կը թողուն։ Կարծես իր հոգւոյն խորը տըխո՞ւր, չատ տխո՞ւր ձայնի մը ընդարձակուած արձագագը կը լսէր, հնչուն և կոյտ քարանձաւի մը պէս, որուն մէջ ձգուած յետին մրմունջը՝ յարուցած անհամեմատ արձագանքովը վէտ-վէտումներով կ՚երկարաձգուի ու կը բազմապատկուի։ Երբէք չէր ունեցած ո և է մկկու մը հետ սրտի այն մտերմութիւնը՝ որ հոգիի նմանութենէ, զգալու և խորհելու նմանութենէ յառաջ կուգայ։

Շատերուն համար — առանց բացառութեան — փակուած տուփ մըն էր այդ Տօքթօրը, ուր՝ չգիտցուիր թէ ի՞նչ կայ պահուած այդ թաքուն պահարանին մէջ, ապամո՞նդ մ՚արդեօք, թէ սևցած չորցած գորշ ածուխի կտոր մը, որ պատրաստ է առաջին մէկ կայծով վառիլ ու հատնիլ։ Ո՛ և է մկկու մը, նոյն իսկ իր էն մտերիմներէն մկկուն՝ չէր յայտնած երբէք իր ներքին ուրախ կամ տխուր մկկ անցեալն։ Կը խորհէինք չատ անգամ թէ այդ վհհանձն մարդը՝ ունեցած ըլլալու էր երիտասարդութեան առաջին սիրոյ ծանր պատրանք մը, բայց այդ

պատրանքը՝ այն մուշէ չէնքերէն ըլլալու չէր որ արշալոյսի առաջին նշոյլին առջև ծուխ ծուխ կը քայքային, կ՚անհետին։

Գ

Գարնան պայծառ օր մըն էր, Տօքթօր Արտաշէսի հետ միասին կը պտտէինք կանաչ մարգագետնի մը վրայ, ու հիացումով կը դիտէինք բնութեան գեղեցկատեսիլ այդ տեսարանը։ Յանկարծ խոշոր ուռենիի մը մօտ կեցաւ նա. նստանք այդ ծառին զով չուքին տակ։ Մեր առջևը հեռուն կը պարզուէր ընդարձակ ծովը, որուն ջինջ կապուտակութիւնը աղօտացած կը հեռանար, կը ձերմկնար ճամանչաւէտ հորիզոնին տակ՝ ուր նաւերուն սպիտակ առագաստները ձիւնափայլ, ճերմակ ամպերու կը նմանէին։ Պայծառ ու զուարթ այդ ծովակին վրայ, ջրին պլտտուն վէմվէտումներուն ցոլացումը աչուըները կը շլացնէր։ Եւ տեղափոխոխ արեւուն ցանուցիր նշոյլները մեզմիկ դպչելով մանրուկ ալիքներուն կը թռչտէին, կարծես ջրի ընդարձակ մակերեւոյթին վրայ՝ հազարաւոր կայծերու ոսոսոտուն թռիմաշանք մը կար։ Այդ ոսկեղէն կայծերը ճօճացող ծնծղայի մը ցայտեցուցած փայլմանց նման մէկ կողմէն միւսը կը ցատկէին ու խաղուն զանակներ կը թափէին՝ ի՛նչ գեղեցիկ էր ծովը։

Մեր ոտքերուն տակ՝ բլուրներուն ծայրերը՝ մինչև անդընդոց խորերը երփներանգ ծաղիկներ իրենց անուշպարար գոյներով կանաչ դալարին տարբեր հրապոյր մը կուտային, ուր կանաչ մարգագետինը կարծես կը չառագունէր։

Արեւուն տօթագին ճառագայթները՝ կը մեղմանային անուշակ բամիին առջև, ու ախորժանքով կ՚ըղձայինք այդ ջերմութիւնը։ Վերջապէս ամբողջ բնութիւնն համակ ուրախութեան ու խնդալի արտայայտութեամբ մը կը պարզուէր մեր աչքերուն առջև։

* * *

Տօքթօր, ըսի յանկարծ, տարիքնիդ բազմապատկուելու վրայ է, ինչո՞ւ չէք ամուսնանար։

Տեսայ որ արտասանած խօսքս զարհուրեցուց.զինքը, դէմքը իր սովորական գոյնէն չրջեցաւ անմիջապէս։ Անոր սրտին մէկ թրթռուն թելին դարկած ըլլալու էի անպատճառ։

— Ա՛խ . . . մը, երկար ա՛խ մը քաշեց Տօքթօրը ու կարեկից նայուածք մը ձգեց վրաս, որուն առջև պահ մը պղպջացի այդ բառերը արտասանած ըլլալուս, չէի կրնար ըմբռնել թէ մէկ խօսքս այդքան մեծ ազդեցութիւն մը պիտի ունենար իր վրայ։

— Պիտի պատմեմ քեզի բարեկամս, պատասխանեց բժիշկը ինծի, թէ ինչո՞ւ համար չեմ ամուսնացած ու ուխտած եմ չամուսնանալ։

Այն ատեն քիչ մը լուռ մունջ չուրջը նայեցաւ, սակայն յայտնի կը տեսնուէր թէ իր աչքերը չուրջը դիտելէ աւելի մտքի յիշատակները կը տեսնէր, կը քրքրէր ամփոփելու համար իր պատմութեան անցեալ մնացորդները։ Մեղմ, ու հեշտօրօր ձայնով մը սկսաւ խօսիլ։

«Քսան տարեկան էի երբ բժշկութիւն սորվելու համար Բարիզ գացի։ Այն քաղաքակրթութեան ոստանին մէջ, զոհւիլ բոյնին մէջ, տարօղջ 7–8 տարիներ առանց չուրջս դիտելու ուսման գործերուվ պարապեցայ։ Առաջին սիրած բանս եղաւ դիտութիւնը, ու բոլոր սրտովս փարեցայ անոր։ Դասընկերներուս մէջ ամենէն առաջինն ու ուսուցիչներուն էն չատ սիրածըն էի։ Ուսմանս մէջ յաջողութեան համար մրցանակներ ալ ստացած եմ։ Ընկերներս պիս կը ծաղրէին այդ տարիքիս մէջ բնական օրինաց (?) հանդէպ ցոյց տուած անտարբերութեանս համար. ընդ հակառակը ես աւելի հեռի կը փախչէի անոնցմէ։»

Փ

«Նստած բնակարանիս ճիշտ դիմացի տունին մէջ Հայ ընտանիք մը կը բնակէր, որուն մէջ կը գտնուէր խիստ գեղանի ու շնորհալարդ օրիորդ մը։ Մինչև այդ վերջին աաեններդը թէև չէի ուզած նչմարել անոր գեղեցկութիւնն, սակայն սիրոյ պըղատոնական ըմբռնումը իմ ու անոր վրայ հետզհետէ գոյացուց ամենասերտ բարեկամութիւնն, որոյ հմայիչ ազդեցութեան տակ՝ կարծես նոր կեանք մը կ՚սկսէր ինձ համար։ Հիմայ եթէ սիրոյ գերագոյն հեշտութիւնը չէի վայելեր, ինչ որ չէի ուզեր ալ, գոնէ հոգեկան մտերմութեան քաղցր վայելումը ունէի։

Հրաշագեղ աղջիկ մ՚էր այդ Լուիզը, — այս էր անունը — հազիւ 20 տարին թևակոխած, դիցուհի մը վեհաշուք ու մանուկի մը պէս փափկիկ, իր նուաղկոտ աչերուն ցոլքը, իր ատամ մազերուն յանկուցիչ տեսքը, դէմքին գեղը, տենդոտ ու շնորհալի խօսուածքը, վերջապէս իր մարմնին բոլոր գեղը՝ կո-

կիկ հրապոյր մը կուտար իր փափուկ կազմուածքին: Եւ քալելէրէչ բան մը կը գտնէի իր ամէն շարժուձեւերուն մէջ, զգլխիչ գօրութիւն մը այդ անմեղութեամբը հրապուրող դէմքին պնդութեան մէջ և գինքը չէր զրկեր պիս անոնց տեսքովը պինդիալու համոյքէն, ու կը ներշնչուէի կարծես այդ անուշ բոյր կաիին քով, որ թարմութիւն, կեանք ու երջանկութիւն էր համակ:

Ի սկզբան երկա՛ր, չա՛տ երկար ժամեր խորհեցայ անոր վրայ, պատճառներ, պատրուակներ ստեղծելով ինքնիրենս՝ ինքզինքս համոզելու համար թէ՝ արժանի չէր որ այնքան կարևորութիւն տայի, բայց չկրցայ յաջողիլ, ներա յիշատակը ամբողջ էութիւնս կը վրդովէր: Երկար ժամանակ, այս երկու հակառակ զգացումները դիս տարուբերեցին: Անձնասիրութիւնը յաղթեց վերջապէս այս պայքարին վրայ, և ես յաջողեցայ թաղել տազնապներս երջանկութեան ու յոյսի երազներու մէջ:

Սակայն սիրոյ այդ անզարտ ըմբռնումը, սիրել ու սիրուելու այդ իսկական ձևը՝ մեծ, խիստ մեծ պղտեցութիւն մտնեցաւ մեր կեանքին վրայ. զմեզ բարձրացուց մեր աչքերուն առջև, հոգեկան տկարութեան վայրկեաններուն, կեանքի դառնութիւններուն մէջ յիշեցինք զայն, և ուզեցինք միշտ աւելի մեծ, աւելի վեհանձն երևիլ մեկզմեկու աչքին:

Ամենուն նկատմամբ բարեսիրտ գործողնք մը, զարմանալի զգացումներ, երազելու մասնաւոր որամադրութիւն մը, յանկարծական չխկտութիւններ, անորոշ տենչանքներ կը նշմարվի իր վրայ, զոր առաջները չունէր, և չէի կարող ոևէ մեկնութիւն մը տալ այս տարօրէն յեզաշարժութեան երևոյթին՝ այնքան պարզ, այնքան լուրջ օրիորդի մը վրայ: Զիս տեսնելուն գմայլած ու զուարթ շարժուձևերով կ'երևէր, որ իր հոգեկան երանութեան կատարեալ ցոլացումն էր: Իր սէրը դողդողար ու չկինոտ բան մ'ունէր, կատարելապէս անձնուրացում մը, և դրեթէ դաղտնի ու ծածուկ զգացում մը, որ իր սաստկութեան համար կը քաշուի, կը պահուըտի. երկրաչարժ մը որ տեսարուխի բոլոր սաստկութիւնները կը պարունակէ՝ առանց անոր աղմկալից ու բացարձակ արտայայտութիւնն ունենալու:

Կը ժպտէր նէ, վոխադարձ արդուզարդի ճշմարիտ խնամքի համար, խնամք մը՝ որ իմ կողմէ կը մատնուէր մինչև պեխերուս ոլորուածքովը, մինչև իսկ փողկապիս ծալքերովը:

Մէկզմէկ հասկցած էինք այլևս, սակայն երկուքս ալ հը-

պարտ, կը ջանայինք ըստ կարի չմատնել այն զգացումներն որոնք մեր մէջ կը զարթնուին Ալ Նոյն իսկ մղձաւանջներուս մէջ կը տեսնէի ուրուականն այն հրապուրիչ կակին, որուն վրայ չէի խորհեր իսկ քանի մը ամիսներ առաջ։

Փ.

Ախոյեան մեր սէրը, — չարունակեց Տօքթօրը սրբելով իր ճակտին հոսած քրտինքները, — հետզհետէ կամրանար, մանաւանդ այդ անուշիկ կակին կողմէ ճշմարիտ սիրոյ մը արտայայտութիւնը երեան կուգար, մինչև իսկ պատրաստ էր նէ իր կեանքը զոհելու մեր սիրոյն համար Սակայն անկեղծ սիրոյ մը յարգը չէի դիտեր այն տեսեն. ուստի չուտով ճանձրացայ։ Այդ ազգկան անձնուիրութիւնը կատարեալ լուծի մը ձևը կ'առնէր քիչ քիչ . . . ծանր բեռան մը տակ կրած կ'զգայի ինքզինքս ու առաջին միճակս վերստանալու ջանքեր կ'ընէի։

Խեղճը բան մը չէր հասկնար իմ այս խռովայուզմներէս, կատարեալ միամտութեամբ կը մատչէր անչուշտ թէ ու է չափազանց զգացումի արտայայտութիւն մը և կամ գկրութիւն մը գործած չէր ու տխրութեամ մը չկար իրմէ երես պահելու։ Զէր դիտեր թէ իր անձնուիրութիւնը ձանձրութիւն ազդած էր միայն իմ վրայ, բայց նէ կ'զգար, կ'տեսնէր որ կը հեռանայի իրմէ, ինչ որ ներա հոգւոյն ծանր թախիծ մը կ'ըլլար։

Վերջապէս օր մը ձնծաղկաց հրաման ստացայ մեկնիլ անմիջապէս, հեռագիր առած էի, ու աճապարանքով մեկնեցայ Ֆրանսայի մայրաքաղաքէն՝ առանց լուր մը տալու այն սիրասուն կակին։

*
* *

Մէկ երկու տարիներ անցած էր այլևս Պոլիս դարձ, ու յարմար պաշտօնատեղի մը ընտրելով՝ սկսած էի հիւանդներ խնամել։ Օր մը մինչ տեղեկիս մէջ միայնակ օրուան թերթերը կը թղթատէի, յանկարծ մարդ մը ներս մտնելով,

— Տօքթօր — ըսաւ — սիրուհիս մեզ կուգէ։

— Ի՞նչ կայ արդեօք, նախապէս կրնա՞նք տեղեկանալ — հարցուցի անոր։

— Օրիորդը հիւանդ է ու պիտի դարմանէք, պատասխանեց ստացուցիչը և տան իրեն առաջնորդելնամար գացի հիւանդին բնակարանը։

Ի՞նչ հանդիպում . . . Օրիորդ Լուիզի մայրը դիմացս ելնելով՝ վեր հանեց գլուխ, ու պահ մը լուռ ու մունջ նստելէ վերջ ինքիր գլխուս գալով

— Երբէ՞ն ի վեր Պօլիս կը գտնուիք, Տիկին, հարցուցի։

— Գրեթէ վեց ամիսէ ի վեր . . . հեկեկաց խեղճ կինը, Օրիորդ Լուիզը ձեր Պօլիս դառնալէն ի վեր տխո՜ւր էր, բառին իսկական նշանակութեամբ, ոչ մէկուն հետ կը խօսէր նէ, վերջապէս հիւանդացաւ և Բարիզի բժիշկները արտօնեցին որ օդափոխութեան երթայ, որովհետև, ըսին, դեղերէն աւելի օդափոխութիւնը կրնայ օգտակար ըլլալ իրեն։ Ուստի էն յարմար տեղը սեպեցինք մեր նախկին բնակավայրը՝ Պօլիս։ Հոս բոլոր մեծ բժիշկները կը նային. . . — յետոյ աչքերը սրբելով — ըսին որ — հեծկլտաց — այլևս կեանք չունի . . . . . ։ Երէկ իրիկուն իմացայ ձեր բնակատեղին ու սպասաւորս ղրկեցի որ անմիջապէս հոս բերէ զձեզ։

— Ո՞ւր է հիմայ Օրիորդը, ըսի լալով։

— Սենեակն է, բայց խնդրեմ աչքին այս կերպարանքով չերևնանք։

Աչքերս սրբեցի անմիջապէս ու հիւանդին սենեակը վազեցի։ Լուիզ երբ զիս տեսաւ, դէմքին վրայէն միայլ մ՝անցաւ ու աչքերը գոցեց դարձեալ։ Զինքը սպառող հիանդութիւնը ա-նուն չունէր, բարոյական երկարաւոր տառապանք մ՝էր քան թէ մարմնական ցաւ մը, տառապանք՝ որ ամենէն աւելի ծանր խոնջանքէն չուտ քայքայած էր իր առողջութիւնը։

Դէմքը թթուեցաւ յանկարծ՝ իր մտքին մէջ հին յիշատակ մը արթնցած էր. դարձեալ ինծի նայեցաւ, ու մրմունջ մը թռաւ իր բերնէն.

— Տօք . . . թօր . . . կը . . . ներեմ . . . քեզ . . . ի . . . դուն . . . ալ . . . ինծի . . . ։

— Ո՛հ, ի՞նչ ըրած ես որ ներեմ քեզի Լուի՛զ . . . պատճառ եղայ քու այս հիւանդութեանդ, խնդրեմ ներէ՛ . . . ։

— Ո՛չ . . . պատասխանեց նէ. կարծես առջի վեհանձն հպարտութիւնը կը յիշեցնէր։ Վերջին խօսքն եղաւ այս, բայց այդէ մը աւելի կարծր, իր մարած ձայնէն աւելի ուժեղ հետք մը թողուց սրտիս վրայ։ Վերջացուց մեռաւ նէ իմ ղրկիս մէջ, ինչպէս որ փափաքած էր պչրանքի մը վայրկեանին։

Պէրթէզ Յուլիս

Դ. ՍԻՄՈՆԵԱՆ

ԴՊՐԵՎԱՆՔԻ Մ'ՊԼՏՔՆ Ի ՎԱՆ

Վան իր կղի մէջ տապկուկը է. բայց մինչ Պօլսոյ մէջ Հերակլիտէսի զգացմամբ կ'ողբան անոր վրայ, Զմիւռնիոյ մէջ Դեմոկրիտէսի լեզուով կ'հեգնեն զայն, շաչկաան անուանելով։ Աշխարհ լսեց Վանայ Թշուառութեան գոյժն, այլ ոչ ոք ոտուգեց թէ նորա Թշուառութեան հիպրան ի՞նչ առիթներէ ծնաւ։

*Երկրի մ'մէջ՝ ուր՝ առ ի չգոյէ ծովեզերքի և երկաթուղիի՝ արտադրութիւն ու սպառում միշտ կ'հակակշռեն զիրար, 6-7 տարին միանգամ հացի սղութիւնն սովաբեր երեւոյթ մը կը համարուի, որմէ երկրին վտանգ դուշակելու տեղի չկայ։ Աշխ, երբ այժմ չափ ցորենն (40 օխայ) 40-45 դահեկանի կը ծախուի, է՞ր ուրեք ուրեք սովամահ եղան ու կ'լինին, երբ 80 Թուականին նոյն չափն 5-600ի կ'ծախուէր։ — Որովհետև ընդհանուր հասարակութեան մէջ գրամի սով կայ, վարկի սով կայ, զգեստի, անկողնի և կահ կարասիի սով կայ, առանին, արհեստական և մշակական գործիքներու սով կայ, չոխաններու և խաշներու սով կայ, երկարամեայ նքմութեանց ու նքոզմանց պատճառաւ՝ առոյգ ու կորովի մշակներու սով կայ,— տեղ տեղ գիւղացի երիտասարդներ իրիկուններ հաւկուր կ'լինին —, որը և այրիներու բազդատմամբ՝ աշխատող բազուկներու սով կայ. ահա ա՛յսքան բռնաւոր պատճառներով՝ հացի և ապրուստի սով կայ, թէև, օրհնեա՛լ է Աստուած, առատ հունձքեր յոյս ու կեանք կ'նկրշնչեն մեր վհատ ժողովրդին, բայց՝ չմոռնանք շեշտել՝ բոլոր բռնադակ այս սովերու ծնողներ եղած են, և դարձ կրկին լինին, հմուտ, անձնուէր և խմաստուն հովիւներու և՝ եթէ ոչ նիւթական՝ գէթ կրօնական ու հոգեւոր խնամոց ու միխիթարութեանց սովերն . . . : Չի մեր կրօնական ախտաժէտ մարմինն՝ խօլ հովերու անձնատուր՝ խապտ և միշտ անխնամ թողուց իր հէք հօտն մոլորութեան անապատին մէջ։ Իսկ մեր Ամերիկայինեն ու բողոքական նպաստներն — որոնց-

*Ա. և Բիւզանդիոնի Գագիկ — 50 տարի անընդհատ կրօնական շփոթութեանց կայծերն արծարծեցին ի զուր [1], բայց ասոնք միայն իրենց զարաւոր ոսոխի հացին եղ քանդու Թիւրեամուխթիանը ըրին ակամայ . . . : Ո՛վ ուսուց նրանք մեր ժողովրդին իր մայրենի դաւանութիւնն ու կրօնն՝ և նա չպահեց չի պաշտպանեց զանոնք, երբ իր կրօնի առաւերին խակ ի պաշտպանութիւն՝ ամէն բան զոհեր ու կ'զոհէ . . . : Երբ մեր հայրենեաց զգուշացուցին զայն ընդդէմ խրաւնի չամացեղ՝ . . . և նա չզուգացաւ: Ինչ կ'ըսեմ, նիւ ունենայինք այլ խմաստուն հովիւներ, ինչո՞ւ մեր առանց գլխի պաշտօն պիտի վարէին և ինչու մեք այս ապականեալն տ'ենթարկուէինք . . . : Մեր ո՞ր հայրեր արիութիւն ունեցաւ այդ խմաստութիւնն քարոզելու, բաց ի մի Եպիսկոպոսէ, որ, աւա՛ղ, իր անկեղծութեան զոհ գնաց, ինչպէս և մեք՝ մեր կեղծ ազգասիրութեան . . . : Ո՛ր օրագիր, ո՛ր լրագիր, ո՛ր հանդէս այդ անկեղծութեան և արիութեան զգացումներն յայտնեց ազգին նկատմամբ, բաց ի Արեւելեան Մատնոյէ, որ՝ քանչ կ'յիշեմ՝ 18 տարի առաջ կատհեղով ներկայ ապականեն՝ լրջաբար ձայն բարձրացուց. "Ինչու տգիտական ցոյցերով վարչական ձնշումներ հրաւիրել մեր անմեղ ժողովրդին վրայ . . . : Բայց հալածուեցաւ քանա մարգարէներէ . . . :

Այսպէս՝ մեք Հայերս ոչ միայն մեր գլխեն պայծառիք ո և

---

[1] Ար. Բեյնօղլոս այսպէս ըսաւ օր մը, «Թեև մեր 50 տարուան անհուն զոհողութիւնք գրեթէ ապարդիւն անցան, ուրախ եմ որ մեր երկաթ 500 որթեր չաւ ապառնի (՛) կ'խոստանան նորոգեալ քրիստոնեայ ըլլալու: Մեր այս նոր Նահատակութեան անցեալ օր իրենց մի լրքըրի մէջ յանդգներ է յայտարարել թէ, «Ամեն անհատ որ Հայ անունը կ'կրէ, կ'նշանակէ գող, խարդախ, խաբեբայ եւ կեղծ քրիստոնեայ . . . : » Անշուշտ գիմ պաշարող ազգի՛ւ դաւանակիցներու բարոյախաւեն դասերով, որ կ'աստուածացնեն զայն օրագրի միջոցաւ, Ջմարիտական յուրիւն մը պահելով այս եւ ուրիշ շատ մը գայթակղական գաղտնիքներու մասին . . . :

է արիած կամ փարձանը ձուսահանդը ընելու իմաստութիւնն չունինք, այլ մեր ձեռքին իսկ վտանգ կ'պատրաստանք մեր դլխին։ Եւ մինչ ուրիշ ժողովրդոց հավիտենին հարիւրաւոր դատերով հազարաւոր կեանքեր փրկելու չնաշխարհիկ ճարպիկութիւնն ի գործ կ'դնեն, մերիններն . . . ա՛չ, ա՛չ, մերիններն չեն անոնք, երբէք, դի եթէ մերիններն լինէին, մեր վրայօք կ'խոկային, և մեր փրկութեան համար կ'տքնէին, կ'հոգային՝ կ'ճրպնէին արդեօք . . . , անոնք իրենց. սակ իրենց պօտարին, քսակին ու կրքին — իրենց գաւառած երերդութեան բարեին ամեն բան զոհ ու յապուրջ տուող Սուրմակներ, Բրքիշներ ու Շմաւէլներ են (անշուշտ անպիտան և անճնտպաշտ մտան կ'նկատանք)։

* * *

Վատպուրական աշխարհ՝ երբեմն իր հազար վանքերով ճոխ ու հռչակաւոր՝ այսօր հազիւ մեր մտաներուն չափ շէն վանքեր ունի. իսկ արժանեաց տէր վանական՝ դրեթէ բնաւ։ Բոլոր այդ վանորայք, որոց ոմանք 18է աւելի դարերու նաւերական կնիքներ կ'կրեն, իրենց այդ ահագին գարաշրջաններու մէջ՝ չը կրցան գէթ անոնցմէ 18ի չափ պայծառօրէն փայլեցնել մեր մտաոսկեզարեայ հորիզոնին վրայ։ Այլ բոլոր բովանդակ այդ վանորայք, մանաւանդ Աղթամար, Լիմ և կաւուց կղզիներ կամ անապատներն իրենց եզական դիրքերովք ու երբեմնի նեմեսական նախանձելի — տարեկան 500ական օսմ. ոսկի — եկամուտներով, որ վէնետիկի ու վէհնայի Մխիթարեան վանօրէից մըրցակից, ազդ. լուսաւորութեան ու յառաջդիմութեան փարոսներ ու աղդակներ և հայ-քրիստոնէութեան զգացմանց անշէջ վառարաններ կրնային լինել, աւա՛ղ, նախանձոտ չահատակութեանց ասպարէզներ և անբարոյութեան խառարտոխիւս թաւարներ եղած են յաւէտ, յոյժ հազուագիւտ բացառութեամբ, ինչպէս Նարեկ ու վարագ։ Զի այդ վանքերն ու անապատներն ոչ միայն դրապէս՝ այլ և մտաւորապէս, կրօնապէս ու բարոյապէս ևս անապատացած կամ կղզիացած են միշտ։ Գարնով հետէ

անդամօր տարածած են աշխատութեան աշխարհաշէն բանակի դասալիքներն՝ ճգնաւորական դիմակներ հագած. Հայութեան մարմնոյ մակաբոյծներն՝ աշխարհուրաց խաչակիր հերոսներ ձեւացած. Արշաւականի շահատակներ՝ անմարմին հրեշատակաց հովիր առած, համարելով աշխարհս կորստական քաղաքիս ...: Վ. Հիւկօ վանական գրութիւնն խմաստասիրելով կ'եզրակացնէ թէ, վանքն ցորչափ ընկերական բարեշրջութեան ու յառաջդիմութեան ծայրածաւալ ծովուն մէջ կղզիացած մնալու դատապարտուած է, վանական գրութիւնն յետադիմական է յաւէտ: Իրաւի վանական գրութիւնն ամենուրեք ալ Պրոկուստի անկողին մ'է աւելի կամ նուազ, սակայն հայ. Եկեղեցւոյ Թոյլատու հոգին, անողոք ժամանակի անհրաժեշտ պէտքերու պահանջներու գիտակցութիւնն, զանոնք պատրաստելու չափ հարկ եղած ուսումներ, գիտութիւններ, լեզուներ մատուցող հայ – քրիստոնէական դաստիարակութեան մը հմտութիւնն և անձնուէր ու կանոնաւոր աշխատութիւնն ալ ոչ նուազ արդիւնաւոր կրնան լինիլ ազգին, ինչպէս փորձն ապացուցաւ Ամմաշի մէջ:

* * *

Վան ունի թէև 4 որբանոցներ, մին իգական սեռի և նոր մ'ալ պիտի բացուի Ս. Խաչի վանքի մէջ՝ քաղքէն մի ժամ հեռի՝ գէպ արեւելքէն հարաւ, անյաւտալի է սակայն արժանաւոր կղեր մ'ունենալ անոնցմէ, զի անոնք ի վիճակի չեն մեր այդ խղճը պահպանելու: Օտար որբանոցներէն յուսալ չնմանութիւն է, և յաւէտ երախտապարտ պիտի մնանք անոնց, եթէ միայն չձգտին քարքշանքել մեր կրօնական, տոհմային և ընտանեկան յատկանիշներն: Մեր ծիսային վարժարաններէ՞ն ուրեմն.— ոչ երբէք, զի անոնց ամփութեան պատճառաւ է, որ այսօր մեր եկեղեցիներուն մէջ կ'վիտան տգէտ կամ գեղջուկ — շատերն ուխտագրաւժ — երէցներ, որոնց 24էն երիւրն հազիւ կարող են անսխալ երկտող մը գրել: Գեր. Ներսէս Արքեպս

մոռչէր է բարեկարգել մեր այդ աւերակ չաղացներն[1], որոյ չաղացպաններէն չորսն հազիւ ձեռնհաս անձեր են, իսկ մնացեալ 15ն աւելի ուսանելու կարօտ քան ուսուցանելու կարող։ Հայկական որբանոցի վարժարանին մէջ, որ անցեալներ սիրալամբ անուանակ հրատարակուած էր Սուրհանդակի մէջ, թէև կրօնական, չափական, բնական և այլն գիտութիւններ, հայերէն, թուրքերէն և ֆրանսերէն լեզուներ, մատենագրութիւն, տոհմային եկեղեցական և ընդհանուր պատմութիւններ և ուսումներ յարմար ծրագրով և կարի լաւամոլ կ'ուսանգուին, բայց ի հարկէ առանց մոռնալու ծրագրի, ուղղութեան, ուսուցչական խմբի և կրօնական ու եկեղեցական երկարատև կրթութեանց՝ անհնար է հայ եկեղեցականներ հասցնել հմուտ հայ եկեղեցւոյ օրինաց, կարգաց, կանոնաց և հոգւոյն և ձեռնհաս՝ վարելու ի բնոյ վայրապատին հօտն հայ եկեղեցւոյ յատուկ սահմանաց ու շաւղաց մէջ, առանց խոտորելու աջ կամ ահեակ։

Դիտմամբ կ'ուռորագծենք, զի տեղւոյս իսկ եկեղեցականներն երբեմն այնքա՞ն տեղի տուին այլազգաւան կղերին, մինչ եկեղեցւոյ բեմն ու պաշտամանց վարչութիւնն իսկ անոր յանձնել, իսկ ամենուստ ապտակուելէ յետոյ՝ այնքա՞ն ուծացան՝ մինչ յարաբերութեանց խափան խզումն և՝ անզգալաբար՝ լուսաբերականութեան դիրկն կնայլ։ Արդէն մեր ո՛ր վարմունքի մէջ ծայրայեղութիւն փայլած չէ միշտ։ Եւ ինչո՞ւ քննադատել այլազգաւան կրօնաւորներու ձկտումներն, երբ ''Որ զէ՛ն անդ և արծուիք...։,,

*
* *

Արդ՝ քանի որ բոլորովին ստուգուած է դժբազդաբար՝ որ ս եր 40 վիճակաւորայ և 24 քահանայից դունդն խափան ապրիկար է պաշտպանել վանայ մէջ հայ հօտն ու փարախն, որ առաւել քան երբէք պաշարուած են բազմազան վտանգներով, քանի որ մեր արդի որբանոցներն ու դպրոցներն անզօր են խափան

[1] Իգական վարժարաններն ալ, որոց մասին պիտի գրեմ վանանաւորապես։

հայ հովիւներ երկնելու և ծնելու, քանի որ այլևս անհնար է հովիւներու՝ առանց կրօնական, փիւսական, լեզուագիտական և նորանոր ուսմանց և մանաւանդ առանց Աբգոսեան դպրատուներու ու շրջահայեցութեան դիմագրաւել անձդուխեանց քրիստոնեայ մտքերու՝ որ այժմէն փայտ կ'ընկենուն, վիճակ կ'արկանեն թէ՝ ո՞ր դասու, որուն դասու հասցէ յաշակերտութիւն, վերջապէս՝ քանի որ, շնորհիւ մեր Օգոստափառ կայսեր, մեր տակաւ չինաշխք վանքերն ու գեղերն, անզանօր բացուելիք որբանոցներն ու գպրոցներն, առանց անբաւ ու անզին հաղերն ու կալուածներն, կրօնական, կրթական, բարոյական, գաւառական, քաղաքական, տեղական, յարաբերական, մշակական, առեւտրական, արհեստական և կենսական գործերն, որ յաւէտ ևրեսի վրայ ելացած են, անհնար, բոլորովին անհնար է որ կանոնաւորութեան և յառաջդիմութեան ճանապարհի մէջ մտնեն երբեք, եթէ չունենանք ուսեալ, զարգացեալ և գաւառաբարեկեալ հովիւներ. հարկ անհրաժեշտ է ուրեմն Պարեվանք մը հաստատել ի վայն, կամ որբանոցներէն մէկին մէջ, կամ՝ եթէ հարկ դնաւոի՝ որբանոցներէն մինչև իսկ մին գոցելով և կամ՝ որ լաւագոյնն է՝ նոր մը բանալով, ճիշդ Աբմաշի Պարեվանքին ծրագրովն և ուղղութեամբ։ Ասկա թէ ոչ՝ վանայ կարևոր թեմի կորստեան ժամն հնչած է . . ., թէև առաջ հունձեր ալ ունենանք, թէև երկինքն անձրևի տեղ տեղատարափ ոսկի ու ցորեն տեղալու ալ լինի, քանի որ հայ հօտն երթալէս անհովիւ է վանայ մէջ։

Մեր այս բանաւոր առաջարկ մեր Ա.մին. և հառնեալ Ա. Պատրիարք հօր խորին ուշադրութեան կ'յանձնենք, որ խնամատարութեան և գործունէութեան վրայ մեծ հաւատս և յոյս կ'ունենք և որ համար ոսկի տառերով պիտի բանգակուի անշուշտ հայ պատերու ու պատմութեան մէջ Մարգարէին գուշակութիւնն թէ ''Եթէ ոչ Ցեան զօրութեանց թողեալ էր մեր Զաւակ, իբրև զՍոդոմ լինեաք և Գոմորայ նմանեաք։,,

„Ի՜ՆՉ ՇՈՒՏ"

Ի յիշատակ տխրագին

Ի՜նչ շուտ արևանայ ժամանակն անգին՝
Րոպեներ՝ ժամեր՝ օրեր՝ տարինե՜ր . . .
Եւ ի՜նչ շուտ տարոյն շրջանիվ չորեքին՝
Գարուն ու ամառն, աշունն ու ձմեռն՝
Միմեանց յաջորդեն՝ առի՜ն ու անցին։

Ի՜նչ շուտ վերջանայ կենաց պերճ գարուն,
Մանուկ՝ պատանի՝ կոյս՝ երիտասարդ
Շո՜ւտ կ'երթան ի մահ կամ ի ծերութիւն.
Եւ ի՜նչ կարճ միջոց ունի յերկրի մարդ՝
Ընդ օտարոց եւ ընդ շիրիմ տընոյն։

Ի՜նչ շուտ թարշամին ծաղկունիվ գեղաբոյր,
Նոցա հիրապոյրժ ո՜րան վաղանցիկ . . .
Ո՜հ, ի՜նչ շուտ թօշնի վարդն անուշաբոյր . . .
Եւ ի՜նչ շուտ ողջոյն կեանքին այս գեղեցիկ
Պիտի շիջանի գերդ պըլպըլուն հուր։

Ի՜նչ շուտ մոռցուին գեղգեղն սոխակին,
Դարնան զով զեփիւռն, կիզիչ տօթն ամրան,
Ձմրան բուքն ու ցուրտն, սառնաշունչ խաւին։
Եւ ի՜նչ շուտ փոխուին շուրջ մեր ամեն բան՝
Մերթ պայծառ՝ զըւարթ, մերթ մութ՝ տրխուագին։

Ի՜նչ շուտ խուսափին խինդ՝ երջանկութիւն՝
Ժըպիտ արտասուք, վիշտ՝ հանգիստ՝ ծիծաղ.
Ի՜նչ վաղանցնուկ են եւ յոյսեր փայլուն . . .
Եւ մահիականացուն փութայ անյապաղ
Դէպի գերեզման, դէպ յիւր վերջին տուն . . . .

Ի՜նչ շուտ՝ ո՜հ, բաժնեն բաղդն ու ժամանակ
Մեզ ի մըտերաց, եւ զանոնք ի մեզ.
Եւ ի՜նչ շուտ մահուան մերթ անեղ զանգակ
Կ'ազդարարէ մեզ մեր սիրելեաց վերջ . . .
Սոսկ մրնայ նոցայ տխուր յիշատակ . . . .

1899, Յուլիս 1
Զմիւռնիա

Ե. Շ. ԳԱՐԵԳԻՆ

ՆՈՐԷՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՇՈՒՐՋԸ *

Շարադրութիւն. — Երբ փոքրիկները շարադրութեան վարժեցնելու կարգը գայ, պէտք է նախ ազատ թողուլ որ գրեն իրենց լսած առակները, առածները և երբ ատանկով քիչ մը զարգանան, ընդլայնել նաև անոնց նիւթերու պարունակութիւնն ալ. այս անգամ փոխանակ առակներու՝ գրել տալ առնոց հեքեաթներ։ Ուսուցիչը այն ատեն փորձով պիտի տեսնէ ու համոզուի թէ անոնք ո՛րքան չատ հեքեաթներ լսած են իրենց մանկիներէն և ինչպէս ամեն պարագայ մանրամասնօրէն, կէտ առ կէտ կը պատմեն իրենց տեղին. ամենահմուտ վիպասանը իսկ չի կրնար թերևս այսպէս պարզ, յստակ ու բնական խօսքերով շարադրել, ինչպէս կը գրէ տղան։ Անոր տղայ հասակին խիստ բնական և յատուկ է մարդկային տղայամտութեան ըստեղծագործութիւնը։

Բայց մեր նախակրթարաններուն մէջ շարադրութեան դասըն ալ չատ անշահ ու տարբեր ուղղութեամբ կ՚ուսանդուի։ Շարադրութեան համար արուած նիւթերը չատ տղուն մտաւոր ու հոգեկան կարողութիւններուն զարգացման աստիճանին չեն համապատասխաներ և արդէն անկարող իսկ են այդ յատկութիւնները տղուն մէջ զարգացնելու։ Ասկից զատ ուսուցիչը հարցերու միջոցաւ առանց նախապէս նիւթին գլխաւոր գաղափարները աշակերտներուն գտնել տալու, առանց ընդլայնումը կարդալով բացատրելու, կը ստիպէն որ անոնք իրենց բացատրութեան ձևերն ու խորհուրդները ստիպողաբար ընդօրինակեն։ Այս ուղղութեամբ տղան աղտոտ նմանող մը ըլլալու կը պատրաստենք, առանց իր խորհելու և բացատրութեան ձևերն ու եղանակը ունենալու. անիկա իր ճնշող, բթացնող և աչ թէ դաստիարակող ուսուցչին ազդեցութեան տակ ոճէ, անհատականութենէ, նկարագրէ և կամքէ զուրկ արարած մը կ՚ըլլայ։

Դպրոցական բոլոր գրաւոր պարտականութիւններու և հրահանգներու սրբագրութիւնը չատ ապարդիւն ու անբաւական եղանակաւ տեղի կունենայ։ Դասատուն է որ կը սրբագրէ հրահանգները և կուտայ աշակերտներուն, որոնք երբէք իրենց

* Տե՛ս, թիւ 15 երես 367

սխալներուն վրայ չեն նայիր ու անոնց պատճառները հասկնալու չեն աշխատիր։ Սրբագրութիւնը այն ատեն միայն իր վերկարար ազդեցութիւնը կունենայ՝ երբ դաստատուն դասարանին մէջ՝ բոլոր աշակերտներուս ներկայութեան ու մասնակցութեան՝ նախ՝ բերանացի ու ապա գրաւոր կերպով կը կատարէ։ Գրաւոր պարտականութիւնները և դասեր ընդօրինակել տալու դրութիւնն ալ գրեթէ իր ծայրագոյն աստիճանին հասուցած ենք մեր վարժարաններուն մէջ. անանկ որ եթէ աշակերտը մինչև երեկոյ գլուխը կախելով չի ճանճրանայ և վերջ ի վերջոյ չի ծուլանայ, ամէն օր, ամէն վայրկեան գրաւոր աշխատութիւններով պարապելու գործ ունի։ Անդադար կը գրէ ու կը գրէ, տետրակները լեցնելէն աչք չի կրնար բանալ որ, ծանօթութիւններ ու գաղափարներ ստանայ, որովհետև ոչ գրածները կարդալու՝ անոնց իմաստը հասկնալով իւրացնելու ժամանակ կունենայ, ոչ ալ սովորութիւն ունի։

Թուագիտութիւն. — Շատ վերացական, կամ աւելի ճիշտ, բթացուցիչ եղանակով կ'աւանդուի թուագիտութեան դասը։ Թիւերու ծանօթութիւնը և չորս պարզ գործողութիւնները առանց առարկաներու և գիւրուսոյց գործիքներու օժանդակութեան, առանց մտաւոր ու հիմնական վարժութիւններու կուսուցանեն, փոխանակ մտաւոր հիմնական վարժութիւններով և իրական կեանքէ առնուած գործնական խնդիրներով աշակերտին ուղեղը զարգացնելու, անոր թուաբանական վիճակաբկ հաչիւներ և արտառոց խնդիրներ կառաջարկուի. բոլորովին վերացական և անըմբռնելի կանոններ գոց ընել կը տրուի, առանց այդ կանոններուն բուն նպատակը հասկցնելու։ Կարճ խօսելով՝ թուաբանական դասերու միջոցաւ տղոց դատողութիւնը զօրացնելու տեղ՝ կը տկարացնենք և հետզհետէ անորոշութեանց կը մատնենք։

Գիտութիւններ. — Գիտութիւնները բնութեան նկարագրութիւնն ու անոր օրէնքներու մեկնիչները են։ Անոնց համար ալ ցաւ ի սիրտ պիտի ըսեմ որ, անոնք իրենց նպատակէն չեղած են պէտք եղածին պէս չաւանդուելով։ Որպէս զի աշակերտը լաւ սորվի գիտութիւնները՝ պէտք է ամենալաւ կերպով կարող ըլլայ բնութիւնը ճանչնալու, այսինքն՝ ուսուցիչը իրեն օժանդակ ունենալով՝ ինքը անմարմ դիտէ, տեսնէ, քննէ և հետազօտէ բնական երեւոյթները։ Բայց մեր մէջ աշակերտներու բնաւ դիտել ու քննել չեն սովրեցնէր, պարզ և դիւրին

ժողովրդոց միջոցաւ անոնց չեն ծանօթացներ այն ամեն օրէնքները՝ որոնք արհեստներու հիմը կը կազմեն, կամ մեր առողջութիւնը պահպանելու գաղտնիքը կը պարզեն. այլ ամէն բան թուաբակօրէն գոց ընել կուտան։

Աշխարհագրութիւն. — *Աշխարհագրութիւնը՝ բնական գիտութիւններու այն անրաժան ընկերը՝ իր երեք գլխաւոր բաժանումներով — ուսումնական, բնական և քաղաքական — բնութիւնը ծանօթացնող, երկրիս և ամբողջ աշխարհին նկարագրութեան ամենէն գործնական դասը ըլլալու կոչումը ունի։ Ասոր համար զայն անկարևոր բան մը սեպելով՝ պէտք չէ գոհ ըլլալ միայն բերանացի բացատրութիւններով, հարևանցի տեղեկութիւններով և գոց ընել տալով. այլ որքան կարելի է, ջանալու է զանոնք գործնապէս աւանդել և ուսանողին մտքին ու յիշողութեան մէջ լաւ դրոշմելու աշխատիլ։ Այս դասն ալ մենք չենք աւանդեր ինչպէս որ պէտք է։ Արդարև ունինք մեր վարժարաններուն մէջ աշխարհացոյցներ, երկրագունտներ, թէև դիտեմ մեր գաւառներուն մէջ վարժարաններ, և ուսանողական կեանքիս մէջ անցուցած եմ չրջաններ՝ ուր բնաւ քարտէսի երեսը տեսնելու բարերաղդութիւնը ունեցած չենք. միայն բերանացի կը յիշէինք յաճախ Պօլիս, Կարին, Երզնկա, Ներապա, Բարիզ, առանց սակայն գիտնալու թէ մեր ո՞ր կողմը կիյնայ, աշխարհի ո՞ր մասին մէջ է, ի՞նչ պատմական տեղեկութիւններ կան անոնց վրայ և։*

Ինչպէս ըսի, գրեթէ հիմա մեր ամեն վարժարաններուն մէջ առաւել կամ նուազ ճոխ աշխարհացոյցներ ունինք. բայց ուսուցիչներէն շատեր զանոնք կը նկատեն անանկ գործիքներ՝ որոնք իբր թէ հնարուած ըլլան միայն իրենց աշխատութիւնները թեթևցնելու համար, ասով ազատած կը սեպեն ինքզինքին յոգնեցնելու և ամեն բան բերանացի բացատրելու ծանր(?) աշխատութենէն։ Մեւս կողմէ չեն մտածեր թէ քարտէսները կը նմանին անպատկեր հայելիներու՝ ուր անհրաժեշտ է եբևնալ ուսուցչին գործնական լանթերը, հրահանգիչ գիւրըմբռնելի ու խմաւորեալ ցուցադրութիւնները որոնք աշակերտներու անդրադառնալով՝ աւելն բան անոնց որոշ ու հիմնապէս ցոյց սիտի տան, առանց օրուն գործադրութեան աշխարհագրութեան պէս գործնական ջիջօցներու կարօտող դասեր անօգուտ և անհրապոյր սիտի դառնան ուսանողին։

Երկրաչափութիւն, քարտագիտութիւն և երկնից դասերը

բարոյական և իմէական մարդը կազմելու նպատակ ունին. հետեւաբար փոխանակ չոր ու ցամաք կերպով աշակերտներու յիշողութիւնը ծանրաբեռնելու, պէտք որ, անոնք ենթակայէն դէպի առարկայ երթան, հոգւոյն և զգացումներուն հետ խօսին։ Ընդհակառակը մենք այդ դասերը այնքան թոյլ ու աւանդական կերպով կը դասաւանօսենք որ, բնաւ իրենց նպատակին չեն ծառայեր և դրեթէ բնաւ աղուն բարոյական ու հոգեկան զգացումները չեն գրգռեր ու զօրացնէր։

Ջանձրանալի պիտի ըլլայ կարծեմ օրինակները երկարել. հարևանցի կերպով յիշատակածներս կը բաւեն ամփոփ գաղափար մը տալու թէ, մեր վարժարաններուն մէջ աւանդականութիւնը իր ամբողջ զօրութեամբ կիշխէ և թէ զաւակներու կրթութեան ու դաստիարակութեան գործը դեռ հաստատ հիմերու վրայ ղրուած չէ։ Սակայն ժողովուրդը երեսուն տարիներէ ի վեր ահագին զոհողութիւն կ'ընէ, ամեն տարի դըպրոցներու պիւտճէն կը բարձրացնէ և վարժապետներու թիւը կ'աւելցնէ։ Ուրեմն ինչո՞ւ չի կրնար մեր ազգայ սերունդը կազմելու պաշտօն ունեցող հաստատութիւնները բարեկարգ ու կանոնաւոր վիճակի մը վերածել և անտեղի ոտուընդներու տեղի չի տալ։ Ասոր պատճառները շատ պարզ են, որոնցմէ մէկ երկուքը կը փափաքիմ յաջորդ յօդուածով մը ուսանողաբար ընել։

Ֆիլիպէ, 24 Յունիս 1899 **Ռ. ՉՕՐԵՃԵԱՆ**

ՋՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ - ՋՐԱԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԷ ԻՋՄԻՐԻ ՄԷՋ

Ջրաբուժութիւնը ջրի կամ ջրով բժշկութիւնն է. բուժական մեթոտ՝ որուն մայր - գաղափարը ամենահին ժամանակներէ հետէ ճանչցուած էր ու հռչակուած, և որ այս վերջին ժամանակներս նորանոր փորձերով ճոխացած և գիտական ճշդութիւն ստացած՝ երթալով վարկ ու ծաւալում կը գտնէ՝ գուգընթաց քալելով պաշտօնական բժշկութեան հետ՝ որուն կարևոր և ատկ անհրաժեշտ մէկ օժանդակը կը հանդիսանայ։

1828 ին Բրիսնիճ անուանով Սիլեզեացի անուսում չինական մ՚էր որ նոր ու զօրաւոր մղում մը կուտար ջրաբուժական մեթոտին՝ որուն վերջնական հիմնադիրը կը համարուի։ Այս գիւղացին բնական խելքի ուժէ՝ զննական ու փորձառական մեթոտով՝ ցուրտ ջրով դարմանումը սխեմէի վերածեց և այնպիսի հրաշալի բժշկութիւններ կատարեց իր ջրաբուժական հաստատութեան մէջ՝ (առաջին անգամ հիմնուած ի Կրաֆենպերկ), որ չուշացաւ գրաւել բուժական աշխարհի լուրջ ուշադրութիւնը։

Դրութիւն մ՚որ զօրեզ աստիճանաւ մ՚առձեռն պատրաստ ունի մի չատ ներգործութիւններ, կամ՝ առանց չափազանցութեան՝ բոլոր այն ներգործութիւններն՝ որք մարդկային ապզը չարչարող բազմադիմի ախտերու բուժման կամ գէթ թեթևացման կը ծառայեն, արժանի է անշուշտ այն բարձր համբաւին զոր կը վայելէ այսօր, և որ իրարու եւեւէ հնարուած բուժական մի չատ մեթոտներու մէջ առաջնակարգ դիրք մը կ՚ընծայէ իրեն։

Եւ յիրաւի դարմանական տեսակէտով կարևոր կամ փոփոխելի եղած ո՛ր յատկութիւնը չունի այս մեթոտը՝ զոր վերջին տարիներու նշանաւոր ջրաբոյժներ Բլօտ Պեռնարի և Պրաուն Սեքուարտի բնախօսական նորանոր փորձերէ ու գիւտերէ լուսաւորուած՝ կատարելութեան կրնայ ըսուիլ ծայրագոյն աստիճանը մղեցին։ Փո՛ղ իր առողջապահիկ ու նախապահեստ յատկութիւնները՝ ունի նա իրր նախնական կամ ուղղակի ներգործութիւն՝ տապալոյս (antiphlogistique), հանգուցիչ (sédatif), գրգռիչ (excitant), գրգռա-չարժիչ (excito-moteur), խոտորիչ (révulsif) և քրտնարեր (sudorifique) յատկութիւններ. և իրր հետևորդ կամ աննուղղակի ներգործութիւն՝ կորովիչ ու վերակազմիչ (tonique et reconstituant), կապտիչ ու վերապտիչ (spoliateur et dépuratif), փոփոխիչ ու բնայլայլիչ (résolutif et altérant) յատկութիւններ։

Ի՞նչ միջոցներով ջրաբուժութիւնը կրնայ յառաջ բերել այսքան զանազան և նոյնիսկ ներհակ արդիւնքներ։ Ո՛չ, բազմադիմի են իր տրամադրութեան տակ գտնուած զէնքերը՝ որոնց տեսակը ու կիրառութիւնք երթալով կ՚աւելնան, և որոնց գործունէութեան չրջանակը կ՚ընդլայնի աւեն օր։ Ջուրն ինքնին իր բարեխառնութեան զանազան աստիճաններով — եռայուսէն մինչև սառուցեալը — դարմանիչ մեծամեծ յատկու-

թիւններ կ'ընծայէ. աւելցուր այն բազմազան ձևերն՝ որոնց տակ կը կիրարկուի այն՝ դիտական ճշդութեամբ, աւելցո՛ւր նաև տևողութեան աւելի կամ նուազ աստիճանները՝ որք բնականապէս տարբեր տարբեր ներգործութիւններ ունին մարմնոյ վրայ, այն ժամանակ գաղափար մը կրնաս կազմել այս դրութեան գործող և ստէպ հրաշալի յատկութիւններու մասին։

Ջրաբուժական հաստատութեանց մէջ գործածուած այլազան ձևերն ու դարմանական միջոցներն չէ թէ նկարագրել՝ այլ մի առ մի յիշելն իսկ երկար՝ խիստ երկար սիրոյ ըլլար։ Ութսունի չափ կը համրուին անոնք՝ մարմնոյ վրայ ընդհանուր կամ տեղական ազդեցութիւններով, որոնց ամենէ գլխաւորներն են՝ (բաց ի իրրև բուժման նպաստիչ միջոց աւելի կամ նուազ առատօրէն խմուած պարզ ջրէն)՝ լոգանք (ամբողջ կամ կէս), կէս–մէջքով լոգանք, (լոգանքի չուրջ աստն և հինգ տեսակներ կան), ջրմաշ (affusion), տուչք (որոնց դրեթէ 20 տեսակներ կը համրուին), թրջած սաւանք (որոնց մէջ հիւանդը կը պատռտուի կամ կը չիրուի) ևն ևն։ Եւ ասոնք ամենը բարեխառնութեան դանագան աստիճաններով ըստ պարագային, և ստէպ տաքէն պաղ կամ պաղէն տաք անցընելով յանկարծ հիւանդը՝ մարմնոյ յօրինուածին վրայ աստիճապէս ազդելու համար։

* * *

Բուժական խիստ ընդարձակ և ըստ ինքեան անթերի դրութիւն մը դարձած է այսօր ջրաբուժութիւնը՝ որու բուժիչ կամ թարեքիչ (palliatif) ազդեցութիւնը կը տարածուի՝ քիչ բացառութեամբ՝ ամեն տեսակ հիւանդութեանց վրայ, նոր թէ հին, և մանաւանդ հին՝ զորս դարմանելու համար պաշտօնական բժշկութիւնը, աւա՜ղ, կը տկարանայ ստէպ։ Մանաւանդ պէս պէս ախտ կը հանդիսանայ յօդացաւերու, անարիւնութեան, տժոյնքի (chlorose), ջղային բազմազան հիւանդութեանց, անզօրութեան ձևի տակ հինցած խօթութիւններու, ու մարմնոյ այլ և այլ կազմածներու գործառնութեանց խանգարում յառաջ բերող մի չատ ախտերու մէջ։ Կան կարգ մը հիւանդութիւններ ալ՝ որոնք առանց հինովին բուժուելու՝ մեծապէս կը թեթևնան կամ կը բարեփոխին այս բարերար մեթոտի շնորհիւ։ Այլ սակայն անհրաժեշտ պայման մը կայ այս դրութեան օգտաւէտ ազդեցութեանց։ Դիտական ճշդութիւն առած բուժական այս ազդու միջոցը՝ փոքմ ու հմուտ

վարպետի մը ձեռքով պէտք է ի գործ դրուի՝ որպէս զի հիւանդին այժին ու հիւանդութեան ձևին ու աստիճանին համեմատ ճշդապէս սահմանուին ջրաբուժական այն որոշ եղանակը՝ որ պիտի յարմարիլ տուեալ դէպքին, այն տևողութիւնը՝ որ պիտի պատշաճուի կիրարկուած եղանակին, հարուցական այժը և մանաւանդ բարեխառնութեան աստիճանը՝ որ պիտի տրուի կենսաբաչխ ջուրին՝ դարմանական յառաջադրեալ նպատակի մը հասնելու համար։ Աւանդ այս էական պայմանի ջրաբուժութիւնը երբէք օգտակարապէս չկրնար ի գործ դրուիլ, և երբեմն նպաստելու տեղ կր վնասէ խեղճ հիւանդի վիճակին՝ որու ախտական պարագաները՝ ուշի ուշով նկատողութեան չառնուած՝ կ՚աւելնան կամ կը ծանրանան անգամ։ Երկսայրի սուր մ՚է այն՝ որ ձախող գործածութեամբ կրնայ կտրել երկու կողմէն ալ։ Ահկէ՝ ահա այն անյաջողութիւնները՝ որք կ՚ապավարկեն երբեմն այս պատուական մեթոդը և որոնց պատասխանատուն միայն և միայն կիրարկող բժիշկին վրայ կը ծանրանայ և ոչ ՅԷյիի, Պենի-Պարտի և իրենց նմաններուն ճշդած ու կատարելագործած ջրաբուժութեան վրայ՝ որ խիստ անմեղ ու անվնաս միջոց մ՚է ըստ ինքեան, և որ օգուտ միայն կրնայ յառաջ բերել, իսկ վնաս՝ ոչ երբէք, միայն թէ դիտցուի ճշգրիտ ու բանաւոր ուղղութիւն մը տալ անոր։

*
* *

Ջրաբուժութեան ընծայած բազմապիսի օգուտներու առջեւ՝ զոր այլ ևս չէ կարելի ուրանալ, ճարահատ բժիշկին դիմումները՝ նա՛և սուր պարագաներու վրչ՝ կ՚աւելնան միշտ դէպ ի այդ օգտաւէտ դրութիւն, ու հետզհետէ ալ պիտի աւելնան։ Հիմայ աշխարհի ամէն կողմ հիմնուած են ջրաբուժական հաստատութիւններ՝ որք մեծամեծ ծառայութիւններ կը մատուցանեն ցաւագար մարդկութեան, և անոնց թիւը երթալով բազմապատկուելու վրայ է քաղաքակրթեալ աշխարհի մէջ։

Իզմիր միայն՝ ուր մանաւանդ ջլային հիւանդութիւնք այնչափ յառաջ գացած են, ունի արդէն երեք մասնաւոր հիմնադրութիւններ՝ բարերար ջրոյ նուիրուած, և որք բաւական լաւ գործ կը տեսնեն։ Տօքթ. Բանկալօյի, Տօքթ. Բօլիպիսի և մարմիչ Պ. Իվանօվիչի հաստատութիւնները։

Տօքթօր Բանկալօի հաստատութիւնը՝ իր տեսակին վրչ առաջինն՝ իր դռները բացաւ 1876ին։ Հիմնադիրը երկար տարինե-

թէ հետէ հիւանդ ու ցաւագար՝ Բարիզ գացած և Օմէլլի մէջ նշանաւոր բրաբոյժ Տօքմօր Պէնի-Պարաթ ձեռքով գործածելով՝ այնքան օգտուեր էր՝ որ գաղափար չկացաւ Եգիպտի մէջ առաջին անգամ հիմնել այսօրինակ հաստատութիւն մը՝ ուր պայմաններըն նաև բրաբուժական գործնական եղանակներն բաւական լաւ ուսումնասիրած էր անուանի վարպետին քովէն իր հաստատութիւնն այժմ ինքն ալ պիտի օգտուէր, ան չկրցաւ դիմադրել այդ Եգիպտի մէջ՝ ուր գաւառներէ ալ բազմութիւն հիւանդներ կուգան գործածելու ազգ դրութեամբ՝ որ չատոյ հաւակ չեմին խաբխոխ մը կ՚ըլլայ Տօքմօր Բանկալոյի մահուընէ ետք իր հիմնադրութիւնը սեղացի ուրիշ բժիշկներու ձեռք անցած՝ կը շարունակուի մինչև ցայսօր, այլ չէր կրնար մնալ առանց մրցակցի Քաղաքակից ուրիշ չատ բժիշկ մը ևս՝ Տօքմէօր Բօլիխ՝ չատ չանցած առանձին բրաբուժարան մը բանալով՝ վարեց գործը մինչև իր մահը՝ որ ամիչ քանի մը տարի չատ առջ պատահեցաւ։

Հիմայ այդ ալ նուազ նշանաւոր հաստատութիւնը Տօքմօր նուիրաբերութեան անորչնութեան տակ կը գտնուի, Եգիպտի և բիւտատարդ բժիշկ մը՝ վկայեալ Վիէննայի բժշկական ճեմարանէն, և որ Աստարիոյ մայրաքաղաքին մէջ Ֆելդչարի հռչակաւոր Տքմ. Ֆրիտմանի հաստատութեան մէջ բաւական ժամանակ վարժութիւններ ընելէ և մասնաւորապէս Գերմանական բրաբուժական մեթոտը ուսումնասիրելէ ետք՝ հիմայ եկած է Եգիպտի իր հայրենիքը՝ իր տեսական և գործնական գիտութիւնները հաստատութեան տակ դնելու համար։

Տօքմօր նուիրաբերութիւնը կերթայ և ատենէ ի բերէ խիստ համակրելի իր հաստատութեան մէջ՝ ուր մեծ կերպով նպաստ կը գտնէ Գաղիական մեթոտներն անխտիր ի գործ կը դրուին, մարմնոյ, երեսարացման և մազերուց դէմ ունեցած կիրարկութիւններ ալ կ՚ըլլան, բրաբուժութեան լաւ օժանդակներ՝ որոնց նոյնպէս գործնական վարժութեամբ ընտելացած է Ֆելդչարի հաստատութեան մէջ։ Իր հետ բերած է գեղեցկանական մեթոտ չատակ ինչ ինչ կատարելագործութիւններ՝ վիէննացի տուչներէ—մարմնոյ մասէ։ Տաճկական բազնիքը ևս կը գտնուի հոն հաստատուած տրամադրութեան տակ։ Տօքմօրութեան գործ չկիսէ պատկերն անդրադարձ Եգիպտի մէջ։

ՀԱՒՔԸ

(Տուիր 21 ի յիշատակին)

Օրօրանիս մօտը նստած,
Մայրս սեղմ երգելով,
Ինձ չատ սիրալիր մուճ էր տրած
Խաչանշան կնիքով....

Մ · Ե · Մ ·

Այսպէ՛ս երգեց մերթ Մասիսի մի որդին,
Հրեշտակային իր մանկութեանն յիշատակ,
Երբ անծանօթ էր իրեն Վիշտն անլսատակ,
Ու սոր հառերդն էր իսէպք սրտին:

« Ջրի ու հացդ ինձ պահապան, ինձ ընկեր»,
Մայրդ կ'երգէր մանկան գուարթ ու ժպտուն,
Կեանքդ երա՛զ մ'էր պայծառ սանուշ օրերուն,
Երբ գորովի այլև որոնին կը հսկէր:

* * *

Որոգի անցաւ, դարոցին մէջ նոյն մանուկ,
Տղկասի վէս քարձուխներուն ստոր ու
Գնաց վայրել արշալոյսին իր արև,
Ջգաս բաղդին հարուածներէն յեղյեղուկ:

Մայրը չիկար, այլ ծերունի, պառաւ
Նեռսէսն հո՛ն էր Աշտարակի մեծ որդին,
Որ խալ դրոշմեց մանկան անբիծ ճակտին,
Ու ցոյց տուաւ անոր ճամբան հետաւոր:

« Գնա՛ », գոռաց, « կեանքի փշոտ ճանապարհ,
Ջրի ու հացդ ինձ պահապան, ինձ ընկեր,
Դիմագրաւէ՛ վտանգներու, անվեհեր
Մուրա՛ քնդ միշտ մի եռանիդով լցուախտո:

* * *

Լռեցիկ մօրն ու Վերսէսիկ երգն ու ձայն,
Ա.յդ յիշատակն անոնց վնա՛ց իր սրտում,
Որ կը գոռար, կ'արձագանգեր անդադրում,
«Աչքն ու Խալը ինձ պահապա՛ն յաւիտեան» . . . :

«Գալէ՛ . . .» եւ նա իր յուսալից օրերուն,
Գալեց մեկիկ, փարած Խային յուսաւոր,
Սիրտն՝ ամպի, երկինքն՝ վիրաւոր,
Ա.յդ անդողդողդ ալագիին մէջ դէպ անհուն . . . :

Կը տեսնէր գայլն սեւերու մէջ ի Սիօն,
Որ կը դիտէր Գերսեւանիին, Գողգոթան,
Աչքն ու Խալը իրեն ընկեր, պահապան,
Ա.րտասուելով կը դիտէր փակ հորիզոն . . .

Կը տեսնէր գայլ ծովափին մօտ, զերդ Հովիւ,
Որ մաղ իրեն դարձած այլերն Հայրենեաց՝
«Լուսաւորչին Ա.րո՛ղն, ըսին, ինձ արժան,»
Ա.յդ բաղդն ուրիշ կողմ բաւական իր անին . . . :

* * *

Ա.րտասուաքոր՝ յառած Կոլկոս մի վայրկեան,
Կը դիտէ հոն՝ ձեզու, կրօն, ոգեւոր,
«Տէր, կը գոռայ յուզուած շեշտով վշտահար,
Ո՞ւր Աչքն ու Խալը, պահապան Հայրենեան . . .»

Ու կը ճայի եւ կը յուսայ դէռ անձայն,
Դառնութիւնէր հատիկ հատիկ կը մեկնին,
Նա կը կրկնէ դէռ եռանդով անմեկին
«Աչքն ու Խալը ձեզ պահապան յաւիտեան» :

ԳԼՈՒԽ ԵՒ ԼԵԶՈՒԻ ԾԱԳՈՒՄԸ

Երբ կ՚բազդատենք հիւսիսային Ամերիկայի մի քանի վայրենի ցեղերուս շինած պատկերները որով մարդիկ, կենդանիներ ու առնիկը կ՚ներկայացնեն, մանաւանդ գծած կոշտ գիմքերու հետ գաղմանագի նմանութիւնը մը կ՚գտնենք։ Հետևաբար կրնայ ըլլալ որ կ՚դրսէ մարդիկն շրջակայ առարկաներու ձևերն արտագրելու և գծագրական արուեստին հնարագիտութեան մէջ մարդս նպատակ ունեցած է իր գաղափարները նկարել և ապագայ կերպարան մարդին տալ. անդոյ բառին տեղ բան մը դնել փորձած է և սկսեր է իսկ աչքին պատկերել գայն նիւթական և ոգեզային մէջ։ Ամերիկայի նմանութիւնն կ՚ծագի այդ առարկան հնարելու միջոցներուն նմանութենիցը, և այնպէս գիրը բազարկրութեան առնել հզօր մի գործիք կը դառնայ։ Սակայնպէս կ՚կարծուի թէ գիրն ի սկզբան գաղափարագրական էր և նկարագրական, ինչպէս է ցարդ հիւսիսային Ամերիկայի կարգ մը հնդիկներու մէջ, ապա ձայնական նշան, յետոյ հնչական և ի վերջ այբուբենական, այսպէս իր ծագումովն կատարելութեան հասնելով։ Այբուբէնի մի քանի տառերն իսկ նկարագիր որոշ ծագում մ՚ունին։ Օրինակի համար, յունական այբուբէնի առաջին տառերն, որոնք կոչուս մը գլխու, առն մը, վրանի մը, ուղի մը, դրան մը ձևն ունէին։ Գաղափարագրական գրութեան մէջ մարդ բառական կ՚անալ անհատներուն կամ առարկաներու իսկ պարզ նկարը նկարելով, ինչպէս ծառ մը, առուակ մը, ասիւն մը։ Այս բան կամ իմանալու գաղափարագրութիւն մ՚է։

Ապա նկատ կ՚նկատէ գուցե նշանական գիրը, որուս նպատակն է վերացեալ գաղափարներ նկարներով բացատրել, նկարներ՝ որ այդ գաղափարներն ուրիշներուն հաղորդեն, ինչպէս՝ ծառս մը որ կ՚նշանակէ ապագութիւն, ագուռս մը՝ խորհրդաւորութիւն կլլլ։

Այս վիճակին մինչև ձայնական գրութեան առնելիք ա՜հա-գին բայլ մը կար. վասն զի նիարն կամ խորհրդանշաններ պէտք էր որ հնչյուն մ՚արտայայտէր: Իրօք՝ համարանութիւնն (rébus) զարգացական գրութենէ զկայ ի ձայնական անցած մ՚է: Ամերիկեան վայրենիներն այս այլազան գրութեան նմանութիւնու մի շատ օրինակներ մեզ ի՚նկերկայնն: Ջինացւոց մէջ՝ գրութիւնն հնչական ձևով մնաց և յառաջ չգնաց, քանի որ այբուբենական չէ այն: Մեքսիկեան արձանագրութեանց մէջ ի զորձ գրուած առանձին այնպէս կ՚ծուի մէկ երբեմն ամբողջովին կիրարկուած խորհրդանշաններու մասնիկներէ շինուած են, բայց դեռ յայտնի չէ մեզ այդ խորհրդանշաններն, որոց նշանակութիւնը առաւելն գաղտնիք մ՚է, ան՞գամ են երբէք ձայնական արժէք մը՝ եգիպտական ու չինական նշաններուն պէս: Գնահատ և մենք կ՚գտնեմնք առաջադիմութեան մէջ կերպ մը միհնագրեր գոյութեան նշաններէ ցոյց առնու համար:

Քարէպատեան բնութեանու մէջ հնագիտներէ գրի նշաններ գնուած և բազմաձևութեանու մէջ մեզի զուած են մի քանի նախնի նշանագրեր փայտի կտորներու և եղջիւրի վրայ փորագրուած: Բանիցման լեզուագիտներու խորին քննութեան առարկայ եղող նկարիչը յուծնու փորձ մէկի ծոցով, կարելի է, քիչ շատ բանաւորութեամբ ներհակայել, մէկ նախկին մարդն իր գործողութիւնը բացատրած է միջարկութեանց նման ազդանշաններ արձակելով, իսկ աւելի բուռն ազդարարութիւններն ալ, նմանողաբար բառեր գործ ածելով: Միշտ շատ ադրատ էր իր բառերէն, գրեթէ զուրկ ամեն վերացական խօսքէ, բայց և այնպէս՝ հարուստ ու ճոխ փոխաբերական նկարագրու կողմէ, որով իր յարաբերութիւնը ի՚արտայայտէ: Նախնական մարդն իր զգայարանքն ու մտածմունքը, մեկ անկատար, յայտնելու ատեն անշուշտ արտաքին շարժուձեներ ալ կ՚ընէր: Թէպէտ քիչ շատ ուղղակի գաղափար կրնանք կազմել խօսքի նախնական նկարագրութեան վրայ, բայց, զժբաղդաբար, մեր հին նախնեաց լեզուն կամ լեզուները կ՚անդնդին միջոցներէ զուրկ ենք:

Ընդհանրապես հաստատուած իրողութիւն մ'է թէ ամեն լեզուները սկսած են միավանկային լինել, ինչպես է ցարդ չինականը: Միավանկութենէ հասան լեզուները կցորդականութեան (ինչպէս մի շատ ամերիկեան և արեւելեան լեզուներն են կըցորդական) այս է՝ լեզուի այլ և այլ տարրերու բարդումն — առէլ բազմաթիւ — որով բառեր կ'կազմուին, բառեր՝ որոց մէն մին հաւասար է ամբողջ խօսքի մը: Ի վերջէ լեզուն միւրաթեան վիճակ մը կ'ստանայ, ինչպէս դասական լեզուները: Ահա այս յաջորդական աստիճաններէն անցնելով է որ լեզուն իր լիակատար զարգացումը կ'ընդունի: Քարի դարի — վերջերը երկրի բնակիչներն այնքան շատցան, որ աշխատութեան բաժանման պէտքն զգալի լինելով, յատաջդիմութիւնն ևս արագ ընթացք մ'առաւ: Առեւտուրի և հաղորդակցութեան պէտքերն աւելի յաճախ և ոսխզոզական ուղղութիւն մը կ'ստանան և լեզուական անհեթեթ ձևեր, ինչպէս նաև նմանողական պարզ առարկաներ, տակաւ տեղի կ'տան աւելի հանդարտին տիպերու, որ աստիճանաբար աւելի ճշգրիտ կերպարան մը կ'առնուն և ճշմարիտ լեզուներու կ'վերածուին: Լեզուն ոչ միայն մտածման արտաքին արտայայտութիւնն, այլ և կերպով մը անոր կցորդութիւնն է, ուստի միոյն զարգացումն մեսնի զարգացման հետ կ'ընթանայ:

Նախ՝ ամենէ պարզ և դիւրին բացատրութիւնները կազմուած պիտի լինին: Խիստ բնական եղանակաւ մ'որ գեռ մանկանց մէջ կ'երեւի, առաջին ձայնական բացատրութիւնները, տակաւութիւս, ինքնաբերաբար նպատակած են առարկաներ և գործարներ նշանակել, նման անանց զոր ի սկզբան նշանակած են երկրորդական արմատներու բարդութեամբ միայն, այնպէս որ առաջնոյն հետ մի բառ կազմած են և ի վերջէ այլափոխուած են շեշտական ներդործութեամբ բառին միութեան ատեն: Առաջին բառերն, մի և նոյն կարգի երեւոյթներու յայտարար, բոլորն անհատի վերաբերող, իրը հիմնական մէկնակէտներ ծառայած են ուրիշ բառերու կազմութեան, այնպէս որ յարաբերական գաղափարներ և համեմատութեան երեւոյթները նշանակող բառեր հետզհետէ թանձրացեալ վիճակէ վերացեալ վիճակի անցած են:

(Շարունակելի) ՓԻՇԱԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ:

Պ. ՓԱՍՈՒԼԻՓՃԵԱՆ

Պ. Խմբագիր,

Երեկոյ մը երբ մի քանի ընկերներ Բարիզի Հայ ուսանողաց միութեան կեդրոնավայրը հաւաքուած էինք, բարեկամէ մը կ'իմանանք թէ Պ. Փասուլիճեան, Հայ դերասանապետը, Լա Շատիթէ հիւանդանոցը կը գտնուէր հիւանդ վիճակի մէջ։

Ինչպէ՛ս, Պ. Փասուլիճեան Բարիզ էր և հիւա՞նդ . . . :

Հետեւեալ օրը անմիջապէս կ'երթանք զինքը այցելելու։ Ինչ յուսախաբութի՛ւն։

Ո՞ր էր այն կորովի ու քաջ դերասանապետը որ քաղաքէ քաղաք կը պտըտէր առանց յոգնութեան, հայ. ներկայացում-ներ տալու տենչէն վառուած, ո՞ր էր այն վարպետը որ ամեն տեղ ծափահարութիւններով կընդունուէր ըլլայ Ռուսիոյ, Պուլ-կարիոյ կամ Տաճկաստանի մէջ։ Որքա՜ն փոխուած . . . մեր առջեւը կը դանէինք տկար ու արդէն կարծես ծերացած դէմք մը, ուր սխրօրէն ու յուսահատ կը փայլէին միայն իր կրակոտ ու վառվռուն աչքերը։

Հիւանդութիւնը՝ պարզ արդիւնք իր տանջալից աշխատու-թեան, որքան այլափոխած էր դինքը։ Կամքն ու հոգին դեռ տակուն, ինք քաղաքէ քաղաք կը թափառէր առողջութիւնը գտնելու իր տկարացած մարմնոյն ու այսպէս Բարիզ ալ եկած էր յուսալով հոս գտնել նոր ոյժեր չարունակելու համար իր օգտակար գործունէութիւնը։

Նոյն օրը, այցելութեան օր ըլլալով, իր մկ հին բարեկամը, Պ. Սերոն Պէպիրճեան, եկած էր զինքը տեսնելու։ Շատ երիտա-սարդ, Ջմիւռնիա ճանչցած էին զիրար, ուր 62-63 թուականին երկուքն ալ մեծ հոչակ հանած, հիմակ տարիներու բեռին տակ երկուքին ալ մազերը ճերմակախառն իրար չէին կրցած ճանչնալ, ու երբէք չէ կարելի մոռնալ այն տեսարանը երբ իւ-րաքանչիւրը ներկայացուեցան։

— Պէպիրճեա՞ն . . . ;

— Փասուլիճեա՞ն . . . ;

Ու մեր դերասանապետը կը ցատքէ անկողնոյն վրայ, դող-դղալով իրարու կը փաթթուին, յուզուած, անկարող երկու բառ փոխանակելու . . . կուլան . . . ։ Ամբողջ սրահը, հիւանդ թէ հիւր, աչքերնին լեցուն կը դիտէին այս երկու հին բարե-կամներու զիրկընդխառնումը։

Ֆաուլիանեանի տպար մարմինը չէր կրնար այս մեծ յաղթութիւնը տանիլ, որու հետեւանքը կրկայ ուրիշ մի հիւանդութեան յայտնուիլը: Իմ իշխիները կ'ուզեն պարզապէս մը կատարել, ինքը իր տպարանին մրայ չի վատահելով կը մերժէ ու 25 որ հիւանդանոց մնալ վերջը կը փոխադրենք գինքը քիչ մը չատ յարմար սենեակի մը մէջ 7, Rue de la Montagne St. Geneviève, ուր, շնորհիւ հայ բժիշկներու խնամքին կը յաջողինք վիճակը քիչ մը բարւոքել, բայց տանց խորհուրդին համաձայն պէտք է որ Ֆվիցերիա կամ Նիս երթայ ու ձմեռն ալ եգիպտոս և հոն է որ մենք մեր պարտքը կատարելու հարկին մէջ կը գտնուինք:

Մենք այլասերներս, երբ օտար հանճարներ կը տեսնենք ալ գովասանքնիս չափ չունին և այս գովքի է, որովհետև հանճար մը կամ տաղանդ մը սահմաններ չունի, այն մարդկութեան կը պատկանին: Բայց ինչ որ տխուր է, չենք ուզեր անկողմնակալ ըլլալ ու մերիններէն չենք տեսներ: Ինչո՞ւ մեր դերասաններուն արժանիքը չի գնահատենք, ինչո՞ւ ջանալ մատուցմի վարագոյր մը քաշել անոնց վրայ: Մասնաւորելով խօսքս Պ. Ֆաուլիանեանի համար, անա վարպետ դերասանապետ մը, իր ամրողջ կեանքը նուիրած հայ թատրոնին, անոր հիմնադիրներէն մին եղած, ոչինչ չէ խնայած անոր փայլին համար, ամեն կողմ հայ դերասաններ հասցուցած ու վերջապէս գրեթէ 40 տարուան գործունէութենէ վերջ երբ այսօր յոգնած մեզ հմար առպիւթիւնն ալ պոհած է, մենք, քաջութիւնը կունենանք գինքը խեղդ վիճակի մը մէջ ձգելու, ու ես կը ճանչնամ մասնաւորներ, լրագրապետներ որոնց պարտքը պէտք է ըլլար անոր օգնութեան հասնիլը, ինչպէս ինքը երբէք չէ պատած իր օգնութիւնը բայց որ և իցէ ձեւի մը տակ:

Գնահատել գիտնանք մեր դերասաններուն ալ արժանիքը անոր մէջ կը կայանար մի բարձրութիւնը ու ես կը սիրեմ յաւատալ թէ, մենք և մասնաւորապէս իր յիշատակը կրող քաղաքները, անտարբեր պիտի չի գտնուինք իր վիճակին առջև ու պիտի չի ներենք որ այս ալ տխուր վիճակին մը բլայ Աղաւնեանի, Դրմեանցի, Սիամանթոյի, Զաքարեանի և Գարոնեանի մեզ համար ամօթալից վիճակին:

Բաքու, 26 Յունիս 1899

Գ. և. ՉԱՔԱՐԵԱՆ

Խմբագրութիւնս Արդի Նամակագրին պատճառներ հաղորդ և տառչարկին ձանձրացուց գանալով, պարտ կը

համարի յանուն տոհմային պատուոյ և մարդասիրու-թեան, կոչում ընել յատկապէս տեղւոյս Հայ հասարա-կութեան թատերասէր և արուեստասէր դասակարգին որ հաճին հանգանակութեամբ կամ այլ միջոցաւ գու-մար մը գոյացնելով ձեռնտու լինիլ արգահատելի ան-ուանի դերասանին որպէս զի իր առողջական վիճակը բարւոքէ, դերասան մ՚որ ինչպէս այլ և այլ հայարնակ քաղաքներու, նոյնպէս Զմիւռնիոյ վասպուրական թատ-րոնին մէջ երբեմն իր տաղանդին սքանչելի նշանները ցոյց տալով այնքան համբաւ ստացած և այնքան հաճոյք ու զմայլանք պատճառած է։

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՆՆԴԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ, պատկերազարդ. գրեց Տօք. Ե. ՏԱՂԱԼԻԱՐԵԱՆ, կ. Պոլիս, տպագր. Յ. Մատթեոսեան, 1899 ե-րես 175, գին 6 դրչ.

Մեր համակրելի բարեկամն Տօք. Տաղալեարեան կ՚ընծայէ իր հրատարակած այս նոր երկով կուգայ մեծ պակաս մը ևս լրա-ցնել, մեր հայ աղքատիկ գրականութեան մէջ։ Մննդական գործարաններու մասին մեր երկրին երիտասարդութիւնը չատ քիչ և կիսակատար տեղեկութիւն ունի, որովհետև օրա-գիրներ և պարբերական թերթեր չատ քիչ անգամ պատ-ճառ պատեհութիւնը ունեցած են այդ մասին խօսելու, և մեր հասարակութիւնն ալ իր մտքի անուշդը միայն թերթերու մէջ կը փնտռէ, առանձին հրատարակուած գրքերու չատ բարե-կամ չէ։

Գրուածքին նիւթը արդէն չատ յարմար չէ թերթերու մէջ լայն տեղեներ, մասնաւոր դասակարգի մը՝ չափահասներու մի-այն մատչելի և օգտակար նիւթ մըն է, հետևաբար չափահաս-ները, իրենց մտքի պաշարին պակասը այս կարգի առանձին հր-րատարակութիւններով միայն կարող են լրացնել, և մենք ջերմօրէն կը յանձնարարենք կարդալ և օգտուիլ այդ կարգի

գրուածքներէ։ Մ. Կ. Նազիկեան էֆէնտի իր չարք մը հրատարակութիւններով արդէն օգտակար ծառայութիւնը մատուցած է հայ հասարակութեան։ Տօք. Տաղաւարեան էֆէնտի ևս կը պայ իր կարգին լրացնել արդէն սկսուած հանրօգուտ գործը։

Այս կարգի պիտանի և անհրաժեշտ երկերու բացարձակ օգտակարութիւնը բացարձակապէս ալ ապացուցանելու համար կարծենք բաւական է յիշել հետևեալ քաղաքի օրինակը կամ աղիտութեան չ՛հը . . . ։

Անցեալ տարի Դամրէժի մէջ հարտանեկան հանդէս մը տեղի ունեցաւ, հանդիսականները իրենց սովորական չնորհաւորութիւնները բարեմաղթելով ուրախ գուարթ հարսնիքի տունէն մեկնեցան և միեան ըստ սովորութեան առաջնորդուեցաւ։ Առագաստի մէջ միեան վաղանցուկ անկարողութիւն մը պատահով չափազանց կը յուզուի և կը յուսահատի, կարծելով թէ այդ անկարողութիւնը հիանալենական է . . . ։ Եւ իր այս ծայրայեղ յուզման և յուսահատութեան վայրկեաններուն մէջ բէվէվկրի մէկ քանի հարուածներով վերջ կուտայ իր երիտասարդ կեանքին . . . ։

Միթէ զոհ չը պնա՞ց այս երիտասարդը իր բացարձակ տգիտութեան, չէ՞ր կարող միթէ փրկուիլ, եթէ կարգացած լիներ Տօք. Տաղաւարեան էֆինտիի վերոյիշեալ գիրքը և մանաւանդ այդ գիրքին ԺԱ. գլուխը, անկէ սորվելով որ պատահական և վտանգաւոր անկարողութիւններ ալ կան, որոնք կարելի է կարմ միջոցի մէջ դարմանել։

Եւ այսպէս քանիներ կան, որ զանազան պարագայներու մէջ անգիտակցաբար զոհ կ՛երթան, հարսնիքի տունը սուգի տունի կը վերածեն։

*
* *

Տօքթ. Ն. Տաղաւարեան էֆէնտիի Մննդական գործարանը ալխատասիրութիւնը գնահատարար կը խօսի նոյն գործարաններու կազմակերպութեան, պաշտօններու և առողջապահութեան վրայ։ Առողջապահական կարևոր մասը գրաւած է 100 էջերէ աւելին, այն տեղ համառօտակի տեղ բռնած են նաև ծննդական գործարաններու հիմնադրութիւնները, յղութեան առողջապահութիւնը, ծննդարեր կանանց և նորածիններու հարկաւոր խնամքը, եւն։

Այս երկը իր ամբողջութեանը մէջ յաջող գործ մըն է,

թէև մասեր կան, որ եթէ աւելի ընդարձակօրէն գրուած լինէին, աւելի օգտակար ծառայութիւն կը մատուցանէին։ Կալմախօսութեան մասը հասարակութեան հասկացողութեան դիւրամատչելի չէ, շատ սեղմուած ոճով մը գրուած է և հասկանալի դառնալու համար ընդարձակօրէն բացատրութեան կարօտ է, թէև այս պակասը մասամբ պատկերները կը լրացնեն, մանր կէտերը կը բացատրեն։

Լեզուի մասին, դժբաղդաբար ստիպուած ենք նոյն խօսքերը կրկնել, ինչ որ արդէն գրած ենք Ա. Մամլոյ 1898 ի 4 և 22 թիւերուն մէջ, նոյն հեղինակին ուրիշ երկերուն առթիւ։ Տաքթ. Տաղտարեան էֆէնտի գուր տեղը կը ճգնի վերականգնացնել գրաբարը, և այն ալ ժողովրդական գրուածքի մը մէջ, գիտութիւնը հասարակութեան մատչելի ընելու, ժողովրդականացնելու պարագային մէջ, որ մեզ համար անտեղի, անյարմար և աննպատակ է։

Իբր նմոյշ քանի մը տողեր մէջ կը բերենք։ «Եւ երիկամանց քով կը դտնուին մինչ ցերրորդ ամիսն սաղմնային կեանց, յորժամ սկսին տարրեր ձևեր զգենուլ ըստ սեռի. . .» (տես 10)։ Այս տողերը մենք այսպէս պիտի գրէինք — Եւ սաղմնային կեանքի մինչև երրորդ ամիսը երիկամներու քով կը դտնուին. այնատեն կ'սկսին սեռի համեմատ տարրեր ձևեր առնուլ —։

Սխալ իմաստով բառեր ալ գործածուած են, օրինակի համար, 151 երես և 13րդ տողին մէջ գերութիւն գրուած է, փոխանակ գիրութիւն գրուելու, հեղինակին միտքը անշուշտ գերութիւն (captivité) բառով գէր (gras, gros) հասկցնել էր, սակայն գէրը չհոթելով գերի (au-dessus de . . . պատուաւոր, բարձր) հետ (տես երես 119, տող 10), գիրութեան (embonpoint) տեղ սխալած է գործածել գերութիւն բառը, որ երկուքը իրարմէ շատ տարրեր նշանակութիւններ ունին։

Փոխանակ «ը» դիմորոշ յոգի յաճախ «ն» գործածուած է, և այս պարագան լեզուին յատնի խորհուրդին մը, աններդաշնակութիւն մը տուած է. հազարաւոր օրինակներէն միայն մէկ քանի հատը յիշենք։ «Զգուշ կացմ—ն ընախօսներէն աստուղջ համարուելով՝ զաւակունք իրենց ծնողաց աւելի չզայրինին սեռ—ն կը ժառանգեն ընդհանրապէս»։ Եւ «իսկ մանչ զաւակներ ունենալու համար՝ մանկամարդ կին—ն քաջառողջ երիտասարդի մը հետ»։ (151)

Ինչո՞ւ համար «ն»ը և ոչ թէ «ը»։

«Ջղայինին սեռն» անհասկանալի է մեզ։ Վերջապէս ե Ընկերական գործարանք» աշխատասիրութիւնը բացի լեզուէն, չատ յաջող և բոլոր չափահասներու օգտակար ու անհրաժեշտ գիրք մըն է։

Դաւէթ, 6 Յուլիս 1899 ՏՕՔԹ. Ե. Ե. ՓԱՇԱՑԵԱՆ

ՕՔՄԱԾԵԱՆ Մ. ՊԱՏՓԱՔԱՔ

Ս. ԵԿԵՂԵՑԻՈՑ ՄԷՋ.

Ցեղւոյս որբանոցին մէջ վերջապէս առիթը ներկայացաւ եւ ահա ուրախութեամբ Պարտիզակէն՝ Կ. Պոլիս և ուղղակի Ագգ. Պատրիարքարան . . . սովորական քննութենէ մը վերջ՝ վերջապէս արժանի կ'լինիմ Ս. Պատրիարք Հօր ներկայութիւնը վայելելու, Որբանոցին մէկ խնդրագիրը ներկայացնելու և ի վերջոյ Նորին Սրբազնութեան հայրական օրհնութիւններն ընդունելու։ Սակայն ես կ'փափաքէի նաև Սրբազան Հայրը տեսնել Ս. Եկեղեցւոյ մէջ, լսել Նորին Ամենս. հոգեշունչ քարոզներուն գէթ մէկ հատը, իր ամբողջութեամբ։ Փափաքս կատարուեցաւ։ Ր. Հիսար էի, և օր առաջ կ'իմանամ թէ — Հիսարի Ս. Սանդուխտ Եկեղեցւոյ անուան տօնախմբութեան առթիւ Ս. Պատրիարք Հայրը պիտի գար պատարագելու և քարոզելու վասն հոգևոր մխիթարութիւն տալոյն հայ ժողովրդեան։

Կիրակի առաւօտ կամապարեմ դէպ ի Ս. Սանդուխտ փոքր Եկեղեցին, որ չատ նեղ կուգար Հիսարի և մօտակայ գիւղերէն դիմող խուռն բազմութեան։ Օդը դեղեցիկ էր, և Եկեղեցւոյ մէջ տեղ չգտնողք դուրսը պատուհաններու քով կանգնած պոչ սրտով կը կ'մասնակցէին հոգևոր արարողութեանց։ Ս. Պատրիարք Հայրը վերջապէս սկսաւ քարոզն բարձր, ուժեղ և ապշեցիկ ձայնով — ձայն մը որ միայն Ն. Ամենս. յատուկ է։ Այդ զօրեղ ձայն հեռուէն կրնայի լսել, սակայն մեզմօրէն կը ճեղքեմ բաշմութիւն և չատ դժուարութեամբ բաւական կ'յառաջանամ մօտէն տեսնելու դիտելու համար Հայ Ռակերաւանը։ Ջայն, խորհուրդ, վեհ կազատումներու արտայայտութիւն, մարմին և հոգի ամենայն պատկառելի՝ . . . ։ Աչքերս չեն կրտանաւր ծակելէն և ականջներս չեն յագենար լսելէն . . . եկեղեցական

հոսանք մ'է կարծես որ կանցնի երակներուս մէջէն . . . կ'սառամ համայն էութեամբ։ Ն. Ա. ձայնը, իր ելևէջներով՝ ոբատուհներ՝ և պզայուն չեչտերը կայծեր ու կայծակներ էին գոցցես, որք կ'սլանային կ'մխուէին անապաշխար սրտերու մէջ, երկաթեայ չղթայներ ու ամրափակ դռներ կոտրելու խորտակելու համար . . . ։ Ո՜հ, այդ վե՜հ ձանին և խորհուրդներու արտայայտութեան մէջ ի՞նչ գաղտնիք, ի՞նչ գերբնական ուժ կար արդեօք, որ կուգար հարիւրաւոր ունկնդիրներու սրտերը շարժելու յուզելու և նոր բարի որոշումներ ընել տալու համար։

Ս. Գատրիարք Հայրը աւուր պատշաճի նիւթ ընտրած էր Ս. Սանդուխտ, ու անոր Սուրբ սիրան ու Սէրն, Պերճախոս քարոզիչը յոյժ ազդեցիկ եղանակաւ պարզեց Ս. Սանդուխտ կոյսին վարած արքունական զմայլելի կեանքը, Թագէոս առաքեալի քարոզին միջոցաւ Քրիստոնէութեան դառնալը, անոր կրած նեղութիւնները և մարտիրոսութեան յոյժ սրտաճմլիկ պատմական յիշատակները և իր կեանքը զոհելն ի սէր Քրիստոսի։ Յուցուց թէ երբ մէկուն սիրան Աստուածային սիրով կ'լեցուի, երբ այդ սիրտ կ'կապուի Աստուծոյ հետ, այլևս երկրաւոր նեղութիւնք, տառապանք, մարմնական տանջանք նշանակութիւն չեն ունենար։ Զմայլելի կերպով նկարագրեց մարդկային սիրտը իբր հոգեկան Աստուածարան բացաւ անոր ծալքերն ու Աստուածային լոյսով ցուցուց անոր մութ անկիւններն, խորչերն ու մարտարապէս նկարագրեց մաքուր Ս. սրտի սրբութիւնն ու երջանկութիւնը և անմաքուր ու մեղսալի սրտին աղետութիւնն, ապականութիւնն ու թշուառութիւնը։ Յուցուց թէ Ս. Սանդուխտ և այլ բազում մարտիրոսներ ու մարտիրոսուհիներ տխմարներ, ապուշներ չէին որ յօժարակամ նուիրած էին իրենց երկրաւոր վայելքներն, փառք, պատիւ, սէր։ վասն դի առնուք կ'տեսնէին ձեռք ձգել երկնային անանցանելի յաւիտենական երջանկութիւն ու օրհնութիւններն։ . . ։ Նաև տխուր չեչտերով ցուցուց թէ այդ վայրկենին երկրիս վրայ կային հազարաւոր գերիներ, մարտիրոսներ ու մարտիրոսուհիներ՝ փառամոլութեան, ագահութեան, արծաթասիրութեան և մարմին ու նոպի աւերող, քանդող, վհատեցնող զանազան մոլութեանց, ա՛թշուառ հոգիներ որ, նիւթապաշտներու առջև, աւա՛զ, իմաստուն և ճարպիկ կ'համարուին» ըսաւ քարոզիչ Սրբազանը։ Պարզեց նաև Քրիստոսի Ս. սիրոյ հիանալի յատկութիւնները, Ք. Պօղոսի Առաքեալն նայն նիւթին վերաբերեալ ճարտասան

խօսքերն մէջ բերելով։ Պատրիարք Սրբազանը նաև ցուցուց թէ Քրիստոնեայք վայելչութեան և չափաւորութեան սահմաններին մէջ Աստուծոյ պարգևած բոլոր բարիքներն վայելելու համար ազատ են, և ոչ թէ լեռը կամ վանքը քաշուելու ևս ճգնաւոր ըլլալու։ Քրիստոնէութեան հիմնադիրը ոչ թէ ճգնաւոր եղաւ, այլ մարդոց մէջ եկաւ ապրեցաւ քարոզեց, բժշկեց, բարիքներ սփռեց ամեն կողմ, կուրծք տուաւ ամեն տեսակ երկրաւոր նեղութեանց . . . ։ Կեանքի ամեն պարագաներու մէջ ամենէն կարևորն սիրան Քրիստոսի նուիրելն է, կեանքը Յիսուսի կեանքին վրայ ձևելն է ըսաւ քարոզիչ Սրբազանը։ Ահա մեծ, օգտակար ու պատուաւոր կեանքը, որ կրնայ ապեզանի մատուցանել տառապեալ մարդկութեան վայրկեաններ կանցնէին անդադարապէս և ես վախի մէջ էի թէ այդ քարոզ, որ Աստուածարանութեան, հոգեբանութեան և փիլիսոփայութեան ամփոփումն էր, պիտի վերջանար, կ'ուեննայի մարկ ընել ժամերով . . . ։ Արուեստական քարոզ չէր այն պէս ես խեցի իրրև խոնարհ ունկնդիր մը։

Գրեթէ երեք քառորդ ժամ տևեց քարոզը, որչափ մարմնական և հոգեկան կորով. Նորին Սրբազնութիւնն իր առաջին խօսքն ես անդով, յուզիչ և դգայուն չեչտերով սկսաւ և վերջին խօսքն ալ այնպէս վերջացուց . . . ։ Եւ ես այդ քարոզը լսելէս վերջ խորին տպաւորութեան ներքև հեռանալ խօսքերը բան մտքս, լսելեայն։ Ահա հոգևորապէս, մարմնաւորապէս պոռնկ, հեռատես, գործունեայ Պատրիարք մը, որուն սիրան, յայտնապէս կերևի, է չա՛տ լայն, չա՛տ խաղաղ ու չա՛տ համբերատա՛ր . . . ։

Պոլսէն, ՍՏԵՓԱՆ ՄԱՆԱՍԵԱՆ

ՔԵՂԱՔԱՆԱԳԱՆ

1900ի ԴԻՏԱԿԸ

Այս մեծդի դիտակին խոշորակը 60 մեդր երկայն է, ծակին լայնութիւնը 1,50 մեդր է· և իրեն ոսպնեակ ապակին 1,25 տրամագիծ ունի· ամփոդչութեան ծանրութիւնը 20.000 հազար տպրատէ աւելի է։ Բնականաբար այսպիսի երկայնութիւն և

ծանրութիւն ունեցող դիտակ մը, սովորական դիտակաց նման մեքենականութեամբ վեր կամ վար իջեցընել՝ աչ կամ ձախ դարձնելը, անկարելի թան մ՚է. որովհետև 60 մեդր մեծագոյ խողովակը կրնայ ծռիլ և ճկտուիլ։ Ուստի այս դժուարութեան յաղթելու համար դիտակը հորիզոնական դիրքով այլ և այլ մոլիներու վրայ յեցած անշարժ կը կենայ։ Երկինքը դիտելու համար կը նայի խոշոր հայելւոյ մը մէջ, որ չարժական է նման ալհարհացոյց դունդերու։ Այս հայելին կարող է արեւելքէ արեւմուտք ընթացող որ և իցէ աստեղ ճառագայթները դիտակին հաղորդել։ Քէպէհա ոսպնաձեւը 1 մեդր և 25 հարիւրաւոդր է, բայց երկնադէտ հայելւոյ ապակին 2 մեդր տրամագիծ ունի, 0.27 հաստութիւն և 3600 հազարագրամ ծանրութիւն. այսպիսի ընդարձակ մակերեսոյթ ունեցող հայելւոյ չինուիլը՝ քանի մը տարի առաջ՝ անկարելի կը համարուէր. բայց Պ. Կոմիէ՝ համբաւաւոր արուեստագէտը՝ յաջողեցաւ չինել՝ տալով հայելւոյն պահանջուած կատարեալ ողորկութիւնը։

Դիտակը երկու ոսպնաձև ունի՝ որոնք ուղղահայեաց կերպով քովէքով հաստատուած են չարժական կառքի մը վրայ՝ որով վայրկենական կերպով իրարու տեղը կրնան դրաւել։ Առանց մին պարպուելու դիտելու համար է, իսկ միւսը տեսնուած առարկայն լուսանկարելու, ասով ուղածնուս համեմատ պիտի յաջողինք ուսումնասիրել, գծել և պատկերել երկնից աստղերը, եւն։

Գործիքին բովանդակ ծախքը 1,400,000 ֆրանք եղաւ։ Լուանոյ տրամագիծը ոսպնաձեւի վրայ 60 հարիւրամեդր է. տաքնն անդամ մեծցնող խոշորացոյց ապակիով մը դիտելով զայն՝ ընդունուած մեծութիւնը 6000 անդամ աւելի պիտի ըլլայ՝ որ կը համապատասխանէ լուանոյ մերձենալուն՝ ոչ մեկ մէջդի՝ այլ 64 հազարամեդր։

Այս պայմաններով պիտի կարողանանք 130 մեդր մեծութիւն ունեցող իրերը դիտել աչքանել. բայց չատ հաւանական է որ իրերը պիտի յաջողին մեծցնել 16.000 անդամ, և այն ատեն պիտի տեսնենք գլուխին մեջէ 58 հազարամեդր հեռու։

Այս հրէշ դիտակը այժմ լմնալու վրայ է։ Ցիրաւի սա 1900ի փարիզեան աշխարհահանդիսին գլխաւոր զարդը պիտի ըլլայ և գլուխ դործոց մինչև յարդ եղած՝ տեսարանական մեքենայից։ Անշուշտ նոր լոյս և մեծ պիտի տայ տիեզերագիտութեան՝ այս Գազմիական հանճարի նոր գործը։

ԱՆԱՆԻԱ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱՋԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

Ըստ կտակի Բարեյիշատակ Յովսէփայ Իզմիրեանց՝ Գրական Յանձնաժողովս կը հրաւիրէ Պատուարժան Հեղինակներն ու Բանասէրները, որ՝ եթէ Ազգային Դպրութեան և Պատմութեան վերաբերեալ ո և է աշխատասիրութեամբ կը փափաքին մասնակցիլ Սահակ-Մեսրոպեան գրական մրցման, փութան իրենց երկասիրութիւնները յուղարկել մինչև յառաջիկայ 1900 տարւոյ Յունուար ամսոյ առ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրն ի Կոստանդնուպոլիս։

Տպագիր երկասիրութիւններն հարկ է որ երեք օրինակ լինին, իսկ ձեռագրերն մէկ օրինակ, որք՝ ըստ կանոնի ետ չեն դարձուիր։

Կ. Պոլիս, (1894)

Մեծ. Մեսրոպ Նուպարեանէ յղուած մ'ուսուցաւ Թմբագրութիւնս առ ի պատասխան Պ. Յ. Միքայէլեանի, բայց Թմբագրութիւնս արժէն փակուած նկատելով այդ խնդիրն, յարմար գտաւ չհրատարակել զայն, վստահ լինելով որ իրեն համակարծիք կ'գտնուի իր յարդելի բարեկամ և աշխատակից Պ. Մեսրոպ Նուպարեան։

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

Տիկին Մաքրուհի Յ. Սիմոնեան, փոխան ծաղկեփունջի 2 արծաթ, ժէհլիտ նուիրած է Մանկական Պարտէզին։

ԹՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

սին դնա՛ հայրիկ։ Նախկին տիրօջմէդ հրաժեշտ առ և բնակարանս եկուր։ Համազգեստ մը տուէք իրեն, իր կերներուն համազգեստէն աւելի զարդարուն, տեսէք որ այդպէս ըլլայ։

Լօնսլըթ. — Օն հայրիկ! կարծեցիք թէ չեմ կրնար գործ գտնել, թէ բերնիս մէջ լեզու չունիմ։ Լաւ, «էլ Դէլ-Յէլ», Իտալիոյ մէջ չրկայ մարդ մը լաւագոյն պնակ կիտ ունեցող, որ պատրաստ ըլլայ գրքի վրայ երդում առնելու թէ յաջող բախտ պիտի ունենամ։ Ահա կեանքի պարզ գիծ մը, ահա կիներու չնչին բանակ մը։ Ափսոս, տասն և հինգ կին բան մը չէ. տասնումեկ այրի և ինը կոյս մէկ մարդու պարզ իրաւունքն է. տակէ զատ երեք անգամ խեղդուելէ ազատիլ և փեսարաւից մահճի մը եզրը կեանքս վտանգել, տասնք չնչին պրծումներ են։ Լաւ, եթէ բախտը կին մ'է, այս գործին մէջ բարի աղջիկ մ'է։ Եկէ՛ք, հայր, Հրեչէն ակնթարթի մը մէջ հրաժեշտ կ'առնեմ։

(Լօնսլըթ և կոպօ դուրս կելլեն։)

Պատանիօ. — Կ'աղաչեմ քեզի, բարի Լէօնարտօ, ասոր ուշադրութիւն ըրէ. այս ամենը դնուելուն և կարգով տեղաւորուելուն պէս, չուտ մը վերադարձիր, վասն զի այս դիշեր խիստ յարդ եւլի ծանօթներուս կանճոյք պիտի տամ։ Շուտ ըրէ՛, գնա՛։

Լէօնարտօ. — Բոլոր չանքովս պիտի աշխատիմ անոր։

Կը մտնէ ԿՐԱՇԻԱՆՕ

Կրաշիանօ. — Ուր է տէրդ ?։

Լէօնարտօ — Հոն է, տէր, պտըտելու վրայ։

(Լէօնարտօ դուրս կ'ելլէ։)

Կրաշիանօ. — Տէր Պատանիօ !։

Պատանիօ. — Կրաշիանօ !։

Կրաշիանօ. — Ձենէ խնդիր մ'ունիմ։

Պասանիօ. — Խնդիրդ ընդունուած է։

Կրաշիանօ. — Մի մերժէք դիս, ձեզի հետ պելմոնթ պիտի գամ։

Պասանիօ. — Շատ լաւ, եկէք։ Բայց մտիկ ըրէ՛, Կրաշիանօ, դու չափազանց ամբոխի, և շատ սոպռ և համարձակ լեզու մը ունիս։ կերպեր՝ որ քեզի բաւական լաւ կը յարմարին և մեր աչքերուն յանցանք չեն երևիր։ բայց այն տեղ՝ ուր դու ճանչցուած չես, հաւատա՛, խիստ յահուր երևոյթ կ՛ունենան։ կ՛աղաչեմ քեզի, ճիգ ըրէ մեղմելու կայթուն ուրուշդ, զգաստութեան քանի մը ցուրտ կաթիլներով, եթէ ոչ ամբոխի վարմունքիդ պատճառաւ կը չարագատուիմ հոն՝ ուր պիտի երթամ և ակնկալիքս կը կորսնցնեմ։

Կրաշիանօ. — Ցեր Պասանիօ, դիս մտիկ ըրէ՛ք։ եթէ համեստ զգեստ մը չեմ զգենուր, յարգանքով չեմ խօսիր, ուրեք երբեք միայն չեմ երդնուր, գրպանիս մէջ աղօթագիրք չեմ կրեր, լուրջ չեմ երևնար, ո՛չ, ալ աւելին, եթէ գոհանքի պահուն՝ աչքերս իմ դլխարկով սապէս չեմ ծածկեր, չեմ հառաչեր և «ամէն» չեմ ըսեր, իր մեծ մօրը հաճոյանալու համար խոհական երևոյթի լաւ վարժուած մէկու մը պէս քաղաքավարութեան բոլոր կանոնները չեմ կատարեր, ալ երբեք ինձի մի վստահիք։

Պասանիօ. — Լաւ, ձեր վարմունքը պիտի տեսնենք։

Կրաշիանօ. — Չարկաւ. սակայն այս գիշերը բաց կը թողում. մեր այս գիշեր ըրածէն չը պիտի դատէք դիս։

Պասանիօ. — Ոչ, մեզք կ՛ըլլար այդ. լաւ և ես կը խնդրեմ որ ձեր զուարթութեան վայելչագոյն սարն զգենուք, վասն զի բարեկամներ ունինք որ զբօսնուլ կ՛առաջադրեն, բայց մնաք բարեաւ, քիչ մը գործ ունիմ։

Կրաշիանօ. — Եւ ես պէտք է որ Լօրէնզօն և միւսները գտնեմ. բայց ընթրիքի պահուն ձեզ պիտի այցելենք։

(Դուրս կ՛ելլեն։)

ՊԱՏԿԵՐ 3.

Վենետիկ. Շայլօքի տան մէջ սենեակ մը:

Կը մտնեն ՃԷՍԻՒԱ եւ ԼՕՆՍՐԼԷԹ

ՃԷսիքա. — *Կը յաւիմ որ այսպէս հայրս թողուլ կու-գես. մեր տունը դժոխք է և դու զուարթ սատանայ մը ես, որ անոր ձանձրոյթի համը կը պակսեցնէիր։ Լօնսըլէթ, քիչ մը եաքը, ընթրիքի ատեն, Լօրէնզօն պիտի տեսնես, որ քու նոր տիրօջը հիւրն է, անոր տուր սա նամակը, դաղտնի տուր, և երթաս բարեաւ. չեմ ուզեր որ հայրս քեզի հետ խօսակցութեան մէջ տեսնէ զիս։*

Լօնսլէթ. — *Մնաք բարեաւ. արդուն քս իմ լեզուին փոխարէն կը խօսին, խիստ գեղափայլ հեթանոս, անու-չիկ Հրէայ: Շատ կը սիրեմ եթէ քրիստոնեայ մը դաւ-նութիւն և ձեզ արատաբած չէ. սակայն մնաք բարեաւ. սա խենդուկ կաթիլները, դուքս, իմ առնական ոգին կը հեղձնեն. մնաք բարեաւ:*

(Դուրս կ'ելլէ)

ՊԱՏԿԵՐ 4.

Նոյնը. պողոց մը:

Կը մտնեն ԿՐԱՇԻԱՆՕ, ԼՕՐԷՆԶՕ, ՍԱԼԱՐԻՆՕ եւ ՍՕԼԱՆԻՕ

Լօրէնզօ. — *Ո՛չ, ընթրիքի պահուն խոյս կուտանք, տանս մէջ կը ծպտինք և կը վերադառնանք, այս աժենը մէկ ժամու մէջ։*

Կրաշիանօ. — *Բայց աղէկ պատրաստուած չենք:*

Սալարինօ. — *Դեռ չահակիրներու խօսքը չըրինք:*

Իր

Սօլանիօ. — *Անչնորհ կ'ըլլայ եթէ վայելուչ կերպով չը հաբդադրուի և, ըստ իս, լաւագոյն է որ բնաւ չը ձեռնարկուի:*

Լօրենզօ. — *Դեռ ժամը չորս է, պատրաստուելու համար երկու ժամ ունինք:*

ԼՕՆԸԼԸԹ կը մտնէ նամակին մը ձեռքը

Բարեկամ Լօնսըլըթ, ինչ լուր կայ?

Լօնսըլըթ. — *Եթէ զայս խզել հաճիք, հարկաւ կը տեղեկանաք:*

Լօրենզօ. — *Գրող ձեռքը՛կը ճանչնամ, արդարև չը քնաղ ձեռք մ'է և այդ չքնաղ ձեռքը աւելի սպիտակ է քան թուղթը, որու վրայ գրեց:*

Կրաչիանօ. — *Անտարակոյս սիրոյ լուրեր:*

Լօնսըլըթ. — *Ձեր թոյլտուութեամբը, տէր:*

Լօրենզօ. — *Ուր կերթաս?*

Լօնսըլըթ. — *Կ'երթամ, տէր, հին տէրս Հրեան նոր տէրս Քրիստոնէին տունը այս դիշեր ճաշի հրաւիրելու:*

Լօրենզօ. — *Կեցի՛ր, ա՛ռ սա, անուշ ձեսիքային ըսէ թէ ղինքը չը պիտի լքանեմ. առանձին խօսէ իրեն, գնա՛:*

(*Լօնսըլըթ դուրս կ'ելլէ:*)

Ցեարք, կ'ուզէք այս դիշերուան ծպտուվին համար պատրաստուիլ, չահակիր մը դտայ ես?:

Պալտիզար — *Ա՜յո՛, ահա ես անվիջապէս պատրաստուելու կ'երթամ:*

Սօլանիօ. — *Նոյնպէս ես ալ:*

Լօրենզօ. — *Ձիս և Կրաչիանօն, տակէ մէկ ժամու չափ ետքը, Կրաչիանօի բնակարանը գտէք:*

Սալարինօ. — *Շատ լաւ, այնպէս կ'ընենք:*

(*Սալարինօ և Սօլանիօ դուրս կ'ելլեն:*)

Կրաչիանօ. — *Ա՜յդ տրակը գեղանին ձեսիքային չէր?*

Լօրենզօ. — *Հարկ է որ ամեն բան ըսեմ ձեղի: Նէ ինծի կ'իմացնէ թէ ինչ կերպով ղինքը հօրը տունէն պիտի*

առնեմ, թէ որչափ ոսկի և գոհարներ կրցած է ճարել, թէ մանկաւագի հագուստ մ'ունի պատրաստ։ Եթէ երբէք անոր հայրը՝ Հրէան երկինք երթայ, իր անուշիկ աղջկան սիրոյն համար պիտ' ըլլայ։ Եւ երբէք դժբախտութիւնը ներա ճամրան կտրել չը պիտի ժտի, եթէ ընէ, պատրուակը պիտ' ըլլայ թէ նէ անհատատ Հրէի մը ծնունդ է։ Եկո՛ւր, միասին երթանք և քալելով կարդա սա Դեղեցիկ Ճեսիքան Յահակիրս պիտ' ըլլայ։

(Դուբս կ'ելլէն)

ՊԱՏԿԵՐ Ե.

Նոյնը. Շայլօքի տան առջեւ։

Կը մտնեն ՇԱՅԼՕՔ եւ ԼՕՆՍԼԸՔ

Շայլօք. — Ա՛յո՛, պիտի տեսնես, աչքերդ քու դատաւորը պիտ' ըլլան. Ձերունի Շայլօքի և Պասանիօի տարբերութիւնը պիտի իմանաս։ Ուր ես, Ճեսիքա! — չը պիտի կրնաս սրկորտատ ըլլալ, ինչպէս որ ինծի հետ եղար։ Ճեսիքա, ուր ես! — և քնանալ և խորդալ և հագուստներդ մաշեցնել — Է՛, Ճեսիքա, քեզի կըսեմ!։

Լօնսլըք. — Է՛, Ճեսիքա!։

Շայլօք. — Քեզի ով ըսաւ որ կանչես?։ Ըը հրամայեցի քեզի որ կանչես։

Լօնսլըք. — Ձեր յարգութիւնը սովորութիւն ունէր ինծի ըսելու թէ առանց հրամանի բան մը չեմ կրնար բնել։

Կը մտնեն ՃԵՍԻՔԱ

Ճեսիքա. — Ձիս կանչեցիք? ինչ է ձեր կամքը?։

Շայլօք. — Ընթրիքի հրաւիրուած եմ, Ճեսիքա, ա՛ւ սա բանալիները, սիրոյ պատճառաւ չէ որ հրաւիրուած

իմ

եմ. դիս կը չողոմեն, սակայն ես ոխի պատճառաւ պիտի երթամ, չուայլ Քրիստոնէէն անանելու համար։ Ձէսիքա, աղջիկս, տունս աղէկ նայէ՛, երթալու խիստ կը դժկամակիմ, հանգստիս դէմ ադէտ մը կը նիւթուի, վասն զի այս գիշեր ստակի տոպրակները երազեցի։

Լօնդրդրի. — կ՚աղաչեմ ձեզի, տէր, եկէ՛ք, երիտասարդ տէրս ձեր տեսութեան կ՚սպասէ։

Շայլօք. — Նոյնպէս ես ալ իրենին։

Լօնդրդրի. — Թէև ամենքը միասին դաւադրեցին, չեմ ըսեր ձեզի թէ դիմակաւորներ պիտի տեսնէք. բայց եթէ տեսնէք, ուրեմն պարապ տեղը չէր որ քիթս արիւնեցաւ վերջին Սև-Երկուշաբթի առաւօտեան ժամը վեցին, չորս տարի առաջ Մոխրոց-Զորեքշաբթիին ինկած օրուան հանդիպելով այն տարի կէսօրէն ետքը։

Շայլօք. — Ինչ, դիմակաւորներ կան ։ Ջիս մոիկ ըրէք, Ձէսիքա, դռները լաւ փակեցէք և երբ թմբուկը և կորվիզ սրնգի անարգ ճչիւնը լսէք, պատուհանները մի մագլէք և անմիտ քրիստոնեաներու չպարեալ դէմքերը տեսնելու համար գլուխնիդ հասարակայ ճամբուն մէջ մի մխէք, այլ տանս ականջները խցեցէք, պատուհաններս կ՚իմանամ, մի թողուք որ խնծիղներու ձայնը իմ համեստ տան մէջ մտնէ։ Յակոբի գաւազանին վրայ կ՚երդնում, դուրսը խրախճանելու փափաք չունիմ այս գիշեր, բայց պիտի երթամ։ Դու, ստահակ, ինէ առաջ դնա, ըսէ թէ պիտի գամ։

Լօնդրդրի. — Առաջ կերթամ տէր, Տիրուհի, հակառակ այս ամենուն պատուհանէն դուրս նայեցէք։

Ա՛յս կողմ պիտի գայ մի Քրիստոնէ,
Որ Հրեուհուդ մը նայուածքը կ՚արժէ։

(Լօնդրդրի դուրս կ՚ելնէ։)

Շայլօք. — Ինչ կ՚ըսէ սա Հագարի սերունդէն ապուշը, հէ ։

Ձէսիքա. — Իր խօսքերն էին « Ձեզ բարեաւ, Տիրուհի », և ոչ ուրիշ բան։

Շայլօք. — Սոսհակը բաւական բարի է, բայց չափազանց ուռող մը, շահուս համար խղուննչի պէս յամր և յօրեկը՝ վայրի կատուէ մ'աւելի քնացող. պիծակները ինձն հետ փեթակի ընկերը չեն կրնար ըլլալ, ուստի իրմէ կը բաժնուիմ, կը բաժնուիմ այնպիսի մեկու մը տալու համար, որու վոխ առնուած քսակը, կուզեմ որ պարպելու օգնէ։ Արդ, ձէոիքա, ներս գացէք. թերևս իսկոյն ետ կը դառնամ. ըրէք ինչպէս որ ըսի. ձեր եաևէն դռները գոցեցէք. « պինդ կապէ որ չուտ գտնես ». ասիկա առած մ'է որ հոգատար մարքերու համար երբէք չը հիննար։

(Շայլօք դուրս կ'ելնէ։)

Ձէոիքա. — Երթաք բարեաւ. եթէ բախտս չը խափանուիր, ես հայր մը և դուք աղջիկ մը կորնյուցինք։

(Դուրս կ'ելնէ։)

ՊԱՏԿԵՐ 6.

Նոյնը։

Կը մտնեն ԿՐԱՇԻԱՆՕ եւ ՍԱԼԱՐԻՆՕ դիմակաւոր

Կրաշիանօ. — Ահա սա է այն քիւրը, որու տակ սպասել խնդրեց մեզի Լօրէնզօ։

Սալարինօ. — Անոր որոշած ժամը գրեթէ անցաւ։

Կրաշիանօ. — Եւ զարմանալի է որ իր ժամէն ուշ կը մնայ, որովհետև սիրահարները ժամացոյցէն առաջ կը վազեն միշտ։

Սալարինօ. — Ո՜հ, տասնապատիկ աւելի երագ կը թռչին վենիւսի աղաւնիները, սիրոշներու դեռահիաս կապերը պնդելու, քան թէ ստանձնուած ուխտը անվըթար պահել տալու համար!։

Լ.Ա.

Դրաշլաճ. — *Միշտ ճշմարիտ է այդ. ով կը մեկնի խրախճանէն, պահելով այն սուր ախորժակը՝ որով բազմած էր հոն ? : Ուր է այն նժոյգը որ, իր արշաւին անհաղ եռանդով, տաղտապիչ ճամբէն կը վերադառնայ ? : Որքան նման պատանեակի մը կամ անառակի մը, իր բնիկ խորշէն կը մեկնի դրօշազարդ մակոյկը, խաղաղիկ հովէն փարատած և ընդգրկուած ! : Որքան նման անառակին կը վերադառնայ, ալեբեկ կողերով և պատռտուն առագաստներով, վախտ, հերձուած ու տնանկած խաղաղիկ հովէն ! :*

Կը մտնէ ԼՕՐԷՆԶՕ

Մաղարիճ. — *Ահաւասիկ Լօրէնզօ, ալ ասոր վրայ հոգը կը խօսինք։*

Լօրէնզօ. — *Ընդայլ բարեկամներ, երկար բացակայութեանս համբերեցիք. ոչ թէ ես, այլ գործերս էին որ ձեզ սպասեցուցին։ Երբ հաճիք կիներու դաղ գառնալ, այն ատեն ես ալ ձեզի համար այսչափ երկար կ'սպասեմ։ Մօտեցէք, հոս կը բնակի իր հայր Հրէան։ Հէ, ով կայ ներսը ? :*

Վերեն կը մտնէ ՃԷՍԻՐԱ, մանչի հագուստներով

Ճէսիքա. — *Ով է՛ք դուք ? ըսէք ինծի, աւելի ապահովութեան համար, թէև կրնամ երդնուլ որ ձեր ձայնը կը ճանչնամ։*

Լօրէնզօ. — *Լօրէնզօն և քոյ սէրը։*

Ճէսիքա. — *Արդարև Լօրէնզօ, և իմ սէրը յիրաւի, վասն զի ուրիշ ով կրնայ գիտնալ եթէ ձերն եմ, Լօրէնզօ ? :*

Լօրէնզօ. — *Երկինք և քոյ վստահութիւնը վկաններ են որ ինն ես։*

Ճէսիքա. — *Ուշ դրէ՛ք. բանեցէ՛ք սա արկղիկը, վասնոր կ'արժէ ան։ Ուրախ եմ որ պիշեր է և դիս չէ՛ք տեսներ, վասն զի ծպտուիս համար շատ ամօթով եմ։*

ԳՐԱՑՈՒՅՑԱԿ

ԴԱՍԱԿԱՆ ԳՐԵԱՆՑ

ՄԱՅՈՒՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ

				Գ՚ր՚
Նար Այբբենարան	պատկ.	Կ. Պալատյան		½
Մանկական Գարուն՝ զ	»	»	Դ. տպ՚ր	2
Առաջին Ընթերցարան	»	Մ. Մամուրեան	» »	2 ½
երկրորդ	»	»	» Զ »	3
Չորրորդ	» (Գիրք Լ՚)	»	« Լ »	6
**Գառմուրիան Հայոց	»	«		7
Ընդհ. Գառմուրիան Հար. Ա.	»	«	Բ »	5
» » » Բ	»	«	Բ »	6
» » » Գ	»	«		10
Առաջնորդութիւն աղջկանց	«			4
Առաջին Տետրակ	»	«		6
Բանալի հայ չարադրութեան	»	»	Բ »	3
Գառմ. բնական վիճակաբան	»	»		5
*Հոգեւոր Առաւօտեան Աղօթքներ		Տ. Մ. Մուրատեան		10
*Գառմուրիան Քրիստոնէական Եկեղեցւոյ		»		15
*Նոյնիսկ երկեցուցիչ Մ. Գառուրեան հայկական ձայնագրութեամբ		Լեւոն Չիլինկիրեան		20
Նոտային քրիստոնէական	Ա.	Վարժապետեան	Հրտ՚ 2 կ՚	2 ½
Այբբենարան ընթերցարան պատկ.		Ռ. Ուրալեան		
տանկախոս աղջոյց համար				1
Նառարար Ճեմարանի Հայ տղոց		Նորայր	Ընդհ.	50
			Ընտ՚	60
			Ընտ՚ Բազմ՚	65
			Ընտ՚ Ընտ՚	70

ԿՐԿՆԱՏՈՄԱՐ ՈՒՔ ԴԱՍՈՎ

Ն. ՅԻՒՋԻՆՅԵԱՆ

Տպագր. Ն. Պէրպէրեան և Որդիք

Գին 6 դրուշ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԳՐԵՑ

ՀՐԱՆՏ Ս. ԽԱՆՃԵԱՆ

Կ. Պոլիս Տպագր. Պերպէրեան 1899

ԳԻՆ **40** ԴՐՇ.

Գրատունս ընդունած է.

ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆ ՏՐԱՆՆՈՒԵՐԻՆ Գ. Թերզեան, *ի պէտս Հայ ուսանողաց Առաւելական խորհրդոյ կրթական ծրագրին համաձայն և մանկավարժական նորագոյն սկզբունքներու համեմատ պատրաստուած։ Գ տպագր. 1899 Կ. Պոլիս։ Ուղիղ ուղղագրութիւն Պոլենց գրատան. գին 60 փարայ։*

ՆԱԽԱՏԱՐԲԵՐՔ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԲՆԱԳՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ևնոյք Թէլեան Բ. *մաս 9-10 տարեկան տղոց համար բնական գիտութիւնք տպագր. Յ. Մատթեոսեան 1899 գին 5 դրուշ։*

ՄԱՆՉ ՏՂՈՑ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՑ ՉԳԱՑՈՒԹԵԱՆ ՎՐՉՑ (գիշտարիւն) *խոշոր առ ծնողս և դաս տարակոյս, մարգ. Գիւմանեարէնէ. տպագր Յ. Մատթեոսեան 1899 գին 2 դրուշ։*

ՄԵԾ ԳԵՐԶ ԿԱՏՈՒՆ

ԹԻՒ 33

ՕՍՄԱՆ ՉԱՒՇԷ ԽԱՆ, ՎԵՐԻ ՅԱՐԿ

Պատիւ ունիմ յայտարարել Պատ. Հատարակութեան եւ մասնաւորապէս իմ բազմաթիւ Արդ. յաճախորդներուս, թէ ուրախ եմ այս անգամ իրենց կարենալ իմացնելու հետեւեալ կարգադրութիւնները, որով անտարակոյս պիտի յաջողիմ աւելի շատ գոհացնել ինձ դիմողները։

1ին Կատարելագործած եմ իմ ձեւագիտութիւն՝ անգլիական նորաձեւութեան հետեւելով։

2րդ Ներքնազգեստներուս մէջ մասնաւոր փոփոխութիւններ ըրած եմ, փորձառու նոր վարպետներ առնելով։

3րդ Կատարեալ ուղղութիւն եւ ճշդութիւն դերձակատան հիմնական սկզբունքներն են, հետեւաբար ոչ է խնամք պիտի չպակսի յաճախորդներուս յանձնելու համար ճաշակաւոր եւ առուն գործեանք, եւ ներկայացնելու անգլիական գործեանքերի նմոյշներ, որոնք միեւնոյն ժամանակ դիներուս չափաւորութեան կողմէ՝ վստահ եմ թէ անմրցելի պիտի լինին։

Ջերմապէս կը յանձնարարեմ ճաշակի ակր անձանց գալ եւ փորձել դերձակատունս։

13 — 24 ՊՕՂՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Մխիթար Մ. Ձիվէյեկեան չքնաղատարտ Անթաթօլիա Գոլէճէ, հմուտ Անգղիերէն, Գաղիերէն եւ Յունարէն լեզուներն ուսանող ուսուցիչ չորս հինգ տարիէ ի վեր այլ ու այլ դիրատիճանց, այժմ պատրաստ է դասախօսել զպրոցներու կամ մասնաւոր տուներու մէջ կամ գրադրի պաշտօն առանձնել վաճառատիրական տան մը մէջ կամ հիւպիր եւ կամ գրաբերը դիմել Մամուլի խմբագրութեան։

6—6

ՍԱՄՈՍԻ ԳՕՆԵԱՔ

Տիտանիթիւմի Ջնարի բիտի և Ընկ. Մամոսի միջև մեկ գործարանի միջոցաւ մշակուած դինիով հնամեայ պատրաստուած խիտ Համեղ և անպարտ ալեքսին ռեֆոմ ըսուածն է կոնսուլտացիան բժշկական կոճակին, բաւ է անգամ մը փորձել։

ՊԱԼԳԱՆԻ ԳԻՆԻ

Գալիական գինիներու ճաշակաբ պատրաստուած անարատ և զուտ սուսնց ֆոճէ (ալբի) և խիտ թևեվև։

VIN D'OR MUSCAT

Ամենաընտիր գինի մը մուսկատէլ ի մասնաւորի պատրաստուած, խիտ Համեղ և փոփիկաճաշակ անձերու Համար կը յանձնարարուի ընթրիքի հետ փոխան շամբանեաի։

ԳԱՐԵՋՈՒՐ ՊՕՄՕՆԹԻ

Ընտանեաց պարծանքին համար ամենէն օգտակարը, յանձնարարելով Պալգայ և Ջմիւռնիոյ առաջնակարգ թիվլինելին, ներմուծեա յանձնարարելի ձիթ մայրերու համար։

ԱՐԹԻԻՐ Ս. ՄՍՐԵԱՆ

Ձէյթնկայ Թաղ (Բահաճ Քիւնէյնան)

Հայոցի համար կեդրոնատեղի Եէրիտճեան եղբարք։

կը գտնուի նաև ամէն նպարավաճառներու քով։

18—24

ՓՆՏՐՒՅԵՔ ՈՒ ԴՈՒՔ ԱԼ ՓՈՐՁԵՑԵՔ

Մասնագետ ՏՕՔՓՈՓ ԲՕՂԻ

ԱՃԱՌԸ.— Անուշ հոտերով՝ մորթը կը կակղցնէ, առանց թելմտելու՝ կը գտնուի. Միւսիւ Արեւրօրուլոսի դեղարանը— Շիշէճիներու մէջ Եուսուֆի փէրխանէի կից. — Պրն. Յակոբ Ս. Մարութեանի քով, Ֆրանկայ թաղ Սրօնթիի փէրխանէն թիւ 21։ Պրք. Դ. և Շ. Եէրիտճեանց մէներանոցը – Հայոց թաղը. Րչէտուիէ ճատտէսի։

Աչխատասիրաց ընկերութեան քով (Մանկանց պարտէզի շահուն Գարաթաչ։)

Պր. Պետրոս Ալիքսանեանի պազարը. Գորտէլիս։

ԿՈՇԻԿԻ ՆԵՐԿԸ *.— Երկու սեռի սև կոշիկները կը նորցնէ, երկարատև փայլուցոլքով՝ առանց վնասելու կամ ճեղքրտելու կաշին։ Կը գտնուի.

Պր. Արմենակ Մինասեանի գրասենեակը. Միւրիզէլամ օզլու խան։

Պ. Ամմա Պօղոս Օհանեանի գործարանատեղին. Շահէն խանի կից։

Հաֆըզ Սապրի Ահմէտ պէյի մէներանոցը. Կառավարութեան դրան մեծ ճէտտան։

Իսկ Գարաթաչ ու Գորտէլիս վերոյիշեալ տեղերը։

---

*Գործ. կերպ.— Կոշիկը ցեխաներէ ու փոշիէ մաքրելէ ետքը շիշին մէջ կախուած սրունգով թեթեւ ու հաւասարապէս քսէ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ա. ՍԱՄՍԼՈՑ

Ամեն անոնք որ կ'փափաքին բաժանորդագրուիլ Ա. Մամլոյ,կարող են դիմել ուղղակի Համբագրատրեանս կամ մեր Մեծ. Գործակալաց։

Ի գիտութիւն մեր բաժանորդաց կ'ծանուցանենք թէ Համբագրութենէս ուղղակի իրենց թերթերն ստացող բաժանորդք պարտաւոր են իրենց բաժնեգինն՝ ուղղակի եւ կանխիկ՝ դրկել Համբագրատրեանս։

Հասցէ

Մ. Մամուրեան — ԻԶՄԻՐ
M. Mamourian — Smyrne

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

24	թիւի	Քաղաքիս համար դրշ. արծ.		**70**
24	»	Արտասահման	»	» **80** կամ **17** Ֆ.
12	»	Քաղաքիս	»	» **40**
12	»	Արտասահման	»	» **40** կամ **8** ½ Ֆր.
24	»	Դասատուաց	»	» **60** կամ **13** Ֆր.

Դասատուաց համար վերցուելիք յիշողութիւն։

ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՆԼԻ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

Կ·ՊՕԼԻՍ —	Մեծ. Սիրուս էֆ· Գաւրեան· Գազազակէր խան թիւ 16 պահնիչ Գալաթա
ԷՕՏԷՄԻՉ —	Մեծ. Տիրան էֆ. Պէճտէրլեան
ՍԱՄՍՈՆ —	Մեծ· Եդուարդ էֆ. Մուրատեան
ԵՐԻՋԱՆ —	Մեծ. Տիգրան էֆ. Տէր Պետրոսեան
ԳԱՀԻՐԻ —	Մեծ. Կարապետ էֆ. Դաւտաւարեան
ՄԱՆՉՈՓԷՐ —	Մեծ. Տիգրան Վարպետեան
ՊՕՍՓՕՌ —	Մեծ. Տիգրան Թաշճեան
ԳԱՀԻՐԻԶ —	Մեծ. Տօք. Փաշալեան
ԱՏԱՆԱ· —	Մեծ. Յակոբ էֆ. Տ. Պօղոսեան
ՀԱԼԻՊ —	Մեծ· Յովհաննէս էֆ. Թիւրապեան
ՌՕՏՈՍՓՕ —	Մեծ· Դշաճ էֆ. Ժամազործեան
ՋՈՒԼՈՒ —	Մեծ. Աբրահամ էֆ· Հայրիկեան
ԱՄԱՍԻԱ —	Մեծ. Թորոս էֆ· Օհանեան
ՆԻՒ-ԵՕՐՔ —	Մեծ Գաւիթ Տ· Յ· Միհրանեան
ԿԻՐԱՒՕՆ —	Մեծ· Գալ ուշա էֆ· Պ· Խոճեան